

Երեսնամյա այսպիսի

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՏԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐԹ**

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍ-ՔԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՒՆ ԿՈՒԹՈՎ

Լուստ Խորան Մայր Աթոռ Սբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու ջերմ շնորհավորանքներն ենք բերում սիրելի տիկնանց եւ օրհորդաց՝ մարտի 8-ի առիթով:

Գարնանամուտին՝ բնության զարթոնքի այս օրերին, մարտիության տունը խնդրություն է հավելում մարդկանց սրտերին՝ առանձնահատուկ կարեւորելով կանանց լուսավոր առաքելությունն աշխարհում: Գործունեության տարբեր բնագավառներում մեր մայրերը, քույրերն ու դուստրերը իրենց հատուկ սիրով, հոգատարությամբ ու հավատարմությամբ արդյունավորում են իրենց ծառայությունը մեր երկրին ու ժողովրդին, ջանքեր ներդնում՝ ի խնդիր մեր հասարակության բարօրության, պետության գործազան, պայծառ ու լուսավոր գալիքի կերտման: Ազգային-եկեղեցական մեր անդաստանում անփոխարինելի եւ բացառիկ են կանանց ուրույն դերն ու նվիրյալ սպասավորությունը, մասնավորաբար՝ ընտանիքների ամբողջության, նոր սերնդի կրթության ու դաստիարակության գործում:

Մայր Աթոռ Սբ Էջմիածնից Մեր սրտագին բարեմաղթանքները բերելով՝ ի խորոց սրտի աղոթում ենք առ Բարձրյալն Աստված, որ օրհնության ու շնորհների ներքո պահպանի մեր մայրերին, քույրերին ու դուստրերին եւ գործացնի ազնիվ ու գովարժան ընթացքով ծառայելու մեր ժողովրդի եւ Հայրենիքի առաջընթացին:

Թող Աստված Իր Սուրբ Աջի հովանին տարածյալ պահի բոլոր տիկնանց եւ օրհորդաց վրա, պարզելի քաջառողջ արելատություն, երջանկություն եւ երկնառաք բյուր բարիքներ:

Սրբոց Վարդանանց նվիրված հանդիսություն Մայր Աթոռում



Փետրվարի 27-ին Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված Ս. Վարդանանց գորավարների տոնին:

Տերեկույթը կազմակերպվել էր Գեւորգյան ճեմարանի եւ Երեւանի պետական լուսավարական ուսանողների կողմից: Միջոցառմանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ ԵՊՀ դասախոսներ, Հայաստանի տարբեր բուհերի ուսանողներ:

Հանդիսությունը բացվեց Տերեկույթի արդյունավետության հարցով, հնչեցին ՀՀ եւ Գեւորգյան ճեմարանի օրհներգերը, ապա բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի հոգեւոր կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գեւորգ եպս Սարոյանը՝ ուրախություն հայտնելով, որ արդեն հինգ տարի է, ինչ ճեմարանն ու Երեւանի պետական համալսարանը միասնաբար են ոգեկոչում Վարդանանց անմահ նահատակների հիշատակը: «Վարդանանց ոգեկոչումը հայ ազգի համար ավելին է, քան տոնը. ժողովուրդն անմահացրել է Վարդանանց հիշատակը, այն դարձրել իր

դարավոր պայքարի հիմնը»,- նշեց սրբազանը:

Ներկաներին ողջունեց նաեւ Երեւանի պետական համալսարանի ռեկտոր, պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արամ Սիմոնյանը: Վերջինս հույս հայտնեց, որ Վարդանանց տոնի հետ կապված ամենամյա հանդիպումները կդառնան գեղեցիկ ավանդույթ ոչ միայն Մայր Եկեղեցու եւ Երեւանի պետական համալսարանի, այլեւ ողջ հայ երիտասարդության համար, քանի որ այս ավանդույթի հիմքում դրված է Վարդանանց անմահ քաջերի եւ հերոսների հայրենասիրությունը, նրանց հավատարմությունը Եկեղեցուն, Մայր հայրենիքին եւ ժողովրդին: Նա կարեւորեց նմանատիպ միջոցառումների դերը՝ դրանք դիտարկելով որպես մեծ գործերի մի փոքր օղակ՝ մեր երիտասարդությանը բերելու դեպի հավատք, դեպի ազգային Եկեղեցի, դեպի հայրենիք:

Միջոցառմանը բանասիրություն ներկայացրեց բանասիրական գիտությունների թեկնածու, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ուսումնական գծով փոխտեսուչ Գեւորգ Մադոյանը: Հանդիսության ընթացքում Վարդանանց խորհուրդն ամփոփող հոգեւոր ու հայրենասիրական երգերով հանդես եկան Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Երեւանի պետական համալսարանի երգչախումբերը:



նի եւ Երեւանի պետական համալսարանի երգչախումբերը, ներկայացվեցին Ավարայրի հերոսների նվիրված բանաստեղծություններ:

Հանդիսության ավարտին ներկաներին իր պատգամն ու օրհնությունը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ գոհություն հայտնելով Աստծուն, որ այսօր Վարդանանց տոնը տոնախմբվում է ոչ միայն Սփյուռքում՝ ազգային մեր հաստատություններում, այլեւ Մայր հայրենիքում՝ հոգեւորականների, ճեմարանի սաների եւ համալսարանական ուսանողների հետ: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ ապագայում Վարդանանց տոնը կնշվի ամենուրեք, որովհետեւ դարձել է շարունակ Վարդանանց ոգին եւ առաջնորդել հայ ժողովրդին եւ գործունեություն տվել՝ դի-

ին արժեքների տկարացում, հոգեւոր կյանքի գործազան անհրաժեշտություն: Այս բոլոր մարտահրավերների առջեւ մենք կկարողանանք հաղթությամբ ելնել, եթե մեզ առաջնորդող ունենանք Վարդանանց հերոսական ոգին, Վարդանանց բարձր գիտակցությունը, սերը՝ առ Աստված եւ սերն առ հայրենիք: Եթե մենք սիրենք մեր Եկեղեցին Վարդանանց սիրով, մենք երբեք մտահոգություն չենք ունենա հոգեւոր եւ բարոյական արժեքների առնչությամբ, որ դրանք հետընթաց են ապրում մեր կյանքում: Եթե մենք սիրենք մեր հայրենին, մեր երկիրը, մեր հողը Վարդանանց սիրով, մեր կյանքից, մեր հայրենիքի եզերքներից կհեռանան ե՛ւ աղքատությունը, ե՛ւ ամեն տեսակի նեղություն, ե՛ւ ամեն արատավոր երեւույթ, որոնք



մակայելու կյանքի բոլոր դժվարություններին եւ կերտելու հայոց պատմության հաղթանակները:

«...Այսօր, երբ մենք հպարտությամբ անդրադառնում ենք նշում ենք Մարդարապատը կամ արցախյան հերոսամարտի հաղթանակը, բոլորս աներկբայորեն ընդգծում ու հաստատում ենք, որ այդտեղ՝ այդ պատերազմի դաշտում, ինչպես Մարդարապատում, այնպես էլ Արցախում, փայլատակեց, ճառագեց Վարդանանց ոգին: Այդ ոգին ապրել է ուղեկցել է մեր ժողովրդին բոլոր ժամանակներում՝ դժվարությունների թե՛ ձեռքբերումների ժամանակաշրջանում: Այսօր էլ հույժ կարեւոր է, որ Վարդանանց ոգին, Վարդանանց գիտակցությունը բնակություն հաստատի մեր մեջ, որ առաջնորդող լինի յուրաքանչյուրիս եւ կերտողը՝ մեր կյանքի ընթացքի:

Այսօր էլ մեր երկրի եւ մեր ժողովրդի առջեւ ծառայած են բազում մարտահրավերներ՝ սոցիալ-տնտեսական դժվարություններ, շրջափակում, արցախյան պատերազմի վերականգնման վտանգ, ազգա-

այսօր մտահոգում են յուրաքանչյուրիս՝ պարզ հայրորդուց մինչեւ պետական իշխանավոր: Ուրեմն՝ մեր պատգամն է եւ հորորդը, որ ապրենք՝ մեր հոգում կրելով Վարդանանց սուրբ առջատակը, այն պատվիրանները, այն պատգամները, այն նվիրական տեսիլքը, ի մեր որոնք Վարդանանց իջան Ավարայրի դաշտ եւ այնտեղ նահատակության փառքի պատկերները»,- մասնավորապես նշեց Վեհափառ Հայրապետն իր խոսքում:

Վերջում Նորին Սրբությունը երիտասարդներին պատգամեց լինել մեր ժամանակների «Վարդանանք»-ը՝ իրենց արիությամբ, սիրով ու հանձնառությամբ: Վարդանանց տոնի կապակցությամբ իր շնորհավորանքները բերելով ազգի բոլոր գավակներին, ում անվանակոչության տոնը Վարդանանց հիշատակի օրն է՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Ս. Վարդանանց բարեխոսությամբ Աստծո օրհնությունը հովանի լինի հայոց ազգի վրա՝ ընթանալու դեպի հաղթական, շեն, բարօր ու պայծառ ժամանակները մեր կյանքի:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Յայտն Կաթողիկոսն ընդունեց

28 հոկտեմբերի

Իտալիայի Նորանշանակ դեսպանին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Յայտն Կաթողիկոսն ընդունեց ԲՅՈՒՄ Իտալիայի Նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ջովաննի Ռիչչուլլին:

Ողջունելով դեսպանին՝ Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց Յայտնականի եւ Իտալիայի միջեւ առկա սերտ փոխգործակցության համար: Այնուհետեւ անդրադարձ կատարվեց Մայր Աթոռի եւ Վատիկանի ջերմ հարաբերություններին, ինչպես նաեւ՝ Իտալիայի դեսպանատան հետ Մայր Աթոռի արդյունավետ համագործակցությանը: Այս կապակցությամբ Վեհափառ Յայտնացեալը

գոհունակությամբ փաստեց, որ այդ սերտ կապերի շնորհիվ Յայ Եկեղեցու մի շարք հոգեւորականներ իրենց ուսումն են շարունակել Արեւմուտքի, այդ թվում՝ նաեւ՝ Զոմբի աստվածաբանական բարձրագույն հաստատություններում:

Չրուցյի ընթացքում խոսվեց նաեւ երիտասարդ սերնդի կրթության եւ դաստիարակության գործում Եկեղեցու կարեւոր դերակատարության մասին:

Հանդիպման ավարտին Ամենայն Յայտն Յայտնացեալն արդյունավոր գործունեություն մաղթեց դեսպանին՝ Յայտնականում իր առաքելության մեջ:

Վրաստանի նախագահին



Ամենայն Յայտն Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին՝ ուղեկցությամբ ԲՅ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի: Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի դիվանագետ Արշակ Եսայ Խաչատրյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն Եսայ Միրզախանյանը, Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրէն Մուշեղ Եսայ Բաբայանը:

Ողջունելով Վրաստանի նախագահին եւ նրան ուղեկցող պատվիրակությանը՝ Ամենայն Յայտն Կաթողիկոսն ուրախություն հայտնեց երկու երկրների միջեւ առկա համագործակցության առիթով եւ շեշտեց, որ նման փոխադասարարություններն ավելի են նպաստում երկու ժողովուրդների ու պետությունների հարաբերությունների զորացմանը: Ամենայն Յայտն Կաթողիկոսն ընդգծեց միեւնոյն տարածաշրջանում կողմ կողքի ապրող երկու հավատակից ժողովուրդների փոխադարձ գորակցության եւ եղբայրության ամրապնդման կարեւորությունը, ինչին մշտապես ուղղված են եղել Յայ Եկեղեցու ջանքերը:

Չրուցյի ընթացքում անդրադարձ կատարվեց Վրաստանի հայ համայնքին եւ նրա պատմական ու ներկայիս մեծ ներդրումին ու դերակատարությանը երկրի տնտեսական, մշակութային, կրթական եւ այլ բնագավառներում: Իր խոսքում Ամենայն Յայտն Յայտնացեալը գոհունակություն հայտնեց Վիրահայոց թեմի եւ հայ համայնքի եկեղեցական հարցերի կարգավորման ուղղությամբ վերջին շրջանում սկսված դրական գործընթացների կապակցությամբ եւ վստահություն հայտնեց, որ դրանք կառաջնորդեն հայրորդիների հոգեւոր կյանքի խնդիրների ամբողջական լուծմանը:

Վերջում Նորին Սրբությունն արդյունավոր գործունեություն մաղթեց տիար Գիորգի Մարգվելաշվիլին՝ ի բարորություն Վրաստանի եւ նրա հավատավոր ժողովրդի:

Հանդիպումից հետո Վրաստանի նախագահին այցելեց նաեւ Մայր տաճար, եղավ տաճարի ավանդատուն-թանգարանում:

28 հոկտեմբերի

Նամահայկական խաղերի մասնակիցներին



Ամենայն Յայտն Կաթողիկոսը Գեորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում ընդունեց Նամահայկական ճմեռային առաջին խաղերի մասնակիցներին՝ ուղեկցությամբ Նամահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Չաքարյանի:

Չրուցյի սկզբում տիար Իշխան Չաքարյանն Ամենայն Յայտն Կաթողիկոսին ներկայացրեց Նամահայկական խաղերի անցած ճանապարհը եւ ճմեռային խաղերի ընթացքը՝ ընդգծելով, որ տարեցտարի մեծանում է մարզիկների քանակը, որոնց սովոր մասն առաջին անգամ է այցելում Յայտնական, ծանոթանում հայրենիքի պատմությանը, շփվում հայրենաբնակ հասակակիցների հետ:

Այնուհետեւ ներկաներին իր օրհնությունն ու գնահատանքը բերեց Վեհափառ Յայտնացեալը: Նորին Սրբությունը փաստեց խաղերի կարեւորությունը նախ եւ առաջ Մայր հայրենիքում հայության համախամբման տեսանկյունից, քանի որ դրանք շնորհիվ հազարավոր հայրերի ներդրում են դառնում հայրենիքի կյանքին, մեր անցյալի պատմությանը, սրբություններին եւ գորացած ու գոտեպնդված վերահառնում իրենց երկրները: Վեհափառ Յայտնացեալը նկատեց, որ այս խաղերը որքանով նպաստում են մարմնի զորացմանը, նույնքանով էլ հայրենիք այցելությամբ խթանում են հոգեւորի զորացմանը: «Այս խաղերի միջոցով կերտվում է մեր ժողովրդի միաբանությունը: Եվ այդ միաբանությունն իր առանցքն ունի Մայր հայրենիքում, որի տերը դուք եք, ուր էլ որ ապրեք ու գտնվեք: Այս գիտակցությունն է կրթվում եւ կերտվում համահայկական խաղերի արդյունքում», - ասաց Յայտն Յայտնացեալը:

Վերջում աստվածահաճո է ազգաշեն գործի համար Ամենայն Յայտն Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց խաղերի կազմակերպիչներին՝ հորդորելով ավելի ընդարձակել աշխարհագրական ընդգրկումը: Յայտն Յայտնացեալը մաղթեց երիտասարդներին, որ Ս. Էջմիածնի օրհնությունը Նորանոր ներշնչանքներ պարգևի նրանց՝ ազգային իրենց կյանքն արդյունավորելու գեղեցիկ իրագործումներով, իսկ Նամահայկական խաղերի օրերին ամենքը ճաշակեն հաղթանակի քաղցրությունը, ապրեն սիրով եւ միշտ շողկապված մասն Յայտնականի հետ:

Հանդիպմանը ներկա էին նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանագետ Արշակ Եսայ Խաչատրյանն ու լուսարարագետ Յովհան Եսայ Հակոբյանը:

9 մարտի

Շախմատի Եվրոպայի 15-րդ անհասական առաջնության մասնակիցներին

Ամենայն Յայտն Կաթողիկոսն ընդունեց շախմատի Եվրոպայի 15-րդ անհասական առաջնության մասնակիցներին: Հանդիպմանը ներկա էին նաեւ Մայր Աթոռի լուսարարագետ Յովհան Եսայ Հակոբյանը եւ Եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրէն Բագրատ Եսայ Գալստանյանը:

Հանդիպման սկզբում Յայտնականի շախմատի ակադեմիայի հիմնադիր-նախագահ, միջազգային գրոսմայստեր Սմբատ Լպուտյանը Վեհափառ Յայտնացեալին ներկայացրեց առաջնության մասնակիցներին եւ մրցապայքարում արձանագրված արդյունքները:

Նորին Սրբությունը, ողջունելով շախմատիստներին, ուրախություն հայտնեց, որ մեր երկրում իրականացվում են միջազգային բազմաթիվ միջոցառումներ ինչպես մշակույթի եւ կրթության, այնպես էլ սպորտի բնագավառում: Անդրադառնալով շախմատի նկատմամբ հայ ժողովրդի առանձնահատուկ վերաբերմունքին՝ Ամենայն Յայտն Յայտնացեալը նշեց, որ շախմատը, որպես տեղեկատվական մտքի արտահայտություն, ազնվական խաղ է եւ կարեւոր առաքելություն ունի մարդկության կյանքում՝ իր ոգով նպաստելու ազգերի ու մշակույթների միջեւ փոխհասկացողության զորացմանը՝ կարեւորելով շախմատի բարերար ներգործությունն անձի դրական որակների ու հատկությունների կերտման, նրա կերպարի ձեւավորման գործում:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը պատասխանեց առաջնության մասնակիցների հարցերին, որոնք վերաբերում էին տարբեր սպորտաձեւերի նկատմամբ Եկեղեցու վերաբերմունքին, Յայ Եկեղեցու պատմությանն ու դերակատարությանը հասարակական կյանքում, ինչպես նաեւ ԼՂՀ հավանարտության խաղող կարգավորման գործում Եկեղեցու մասնակցությունը:

10 մարտի

Սերբիայի արտաքին գործերի նախարարին



Ամենայն Յայտն Կաթողիկոսն ընդունեց Սերբիայի Հանրապետության արտաքին գործերի նախարար Իվան Մրկիչի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման Ամենայն Յայտն Կաթողիկոսն անդրադարձավ հայ եւ սերբ ժողովուրդների պատմական ընդհանրություններին եւ ներկայիս մարտահրավերներին՝ մասնավորապես ընդգծելով երկու ժողովուրդների հոգեւոր-մշակութային, նաեւ քաղաքական կյանքում Յայ Առաքելական ու Սերբ Ուղղափառ Եկեղեցիների ունեցած բացառիկ դերակատարությունը:

Նորին Սրբությունը գոհունակությամբ արձանագրեց երկու պետությունների միջեւ առավել սերտացող հարաբերությունները՝ շեշտելով, որ իբրեւ հարուստը հավատացող ժողովուրդներ՝ պետք է լավատեսության ոգով դիմագրավել ներկայիս դժվարությունները:

Իր հերթին Սերբիայի արտաքին գործերի նախարարն Ամենայն Յայտն Կաթողիկոսին փոխանցեց Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու Իրենեոս պատրիարքի եղբայրական ողջուններն ու բարեմտաբանությունները, ապա ներկայացրեց այցի ընթացքում արձանագրված արդյունքները, անդրադարձավ երկու ժողովուրդների կյանքում առկա նույնական խնդիրները համատեղ, գործակցության ոգով հաղթահարելու անհրաժեշտությանը:

Խոսվեց նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի, ինչպես նաեւ երկու երկրների հոգեւոր կյանքի, սոցիալ-տնտեսական խնդիրների մասին:

Նվիրաբերություններ Մայր Աթոռի սոցիալական ծառայությանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Յայտն Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ձեւավորված Սոցիալական ծառայության բաժնին իր ակտիվ գործունեությունն է շարունակում սոցիալական ոլորտում:

Ծառայության համակարգում գործում են չորս բարեգործական ճաշարանները, հայրորդաց տները, «Գարեգին Բ» տնաշինական ծրագիրը, Մայր Աթոռի հովանու ներքո գործող «Նազգաշյան մանուկների տուն» երեխաների աջակցության կենտրոնը, ինչպես նաեւ օգնություն է ցուցաբերվում կարիքավոր ընտանիքներին եւ հայրենիքում ապաստան գտած սիրիահայերին:

Սոցիալական ծառայության բաժինը վայելում է հայրենիքի եւ սփյուռքի ինչպես եկեղեցական կառույցների, այնպես էլ անհատ հայրորդիների աջակցությունը: Ծառայության գործունեությանն ի նպաստ՝ օրեր առաջ Արարատյան հայրապետական թեմը 50 մլն ԲՀ դրամ է հատկացրել 2004-2014 թթ. ընթացքում թեմի տարածքից զորակազմված, սահմանամերձ գոտիներում գոհված զինվորների եւ Յայտն բանակում երկու եւ ավելի զինվոր ունեցող ընտանիքներին աջակցություն ցուցաբերելու համար:

Մայր Աթոռի կողմից իրականացվող սոցիալական ծրագրերի համար «ԵԿԼՕՏ Հայաստան» միջազգային կազմակերպություն

իր հերթին Մայր Աթոռի սոցիալական ծառայությանը նվիրաբերել է 70 մլն ԲՀ դրամ:

Մայր Աթոռի սոցիալական ծառայությունն իր շնորհակալությունն է հայտնում այն բոլոր կառույցներին, կազմակերպություններին ու անհատ բարերարներին, ովքեր իրենց զորակցությունն են բերում Յայ Եկեղեցու այս կարեւոր առաքելությանը:

Սոցիալական ծառայության գրասենյակ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՂՈՒԿԱՍ Ա ԿԱՐՆԵՋԻ (1780-1799)

Սկիզբը՝ 2013-ի թիվ 21-24, 2014-ի թիվ 1-4

Երեւանի խանը, վախենալով հետեւանքներից, իր թանկարժեք ունեցվածքն ուղարկել էր Խոյ՝ հանձնելով Յուսեյն խանի հոգաժողովին: Բայց երբ ուզեց ետ ստանալ, չվերադարձրին, եւ Մահմադը ստիպված էր այն ստանալ պատերազմով, իսկ Յուսեյնի եղբայր Ջաֆարը խանին էլ պատանդ վերցրեց: Կարծելով, թե բարկամոլությունը վերականգնված է, նա պատանդին ազատ արձակեց, սակայն Յուսեյնը 1790 թվի գարնանը պատերազմը վերսկսեց եւ հասավ մինչեւ Երեւան: Մահմադը ամրացավ Երեւանի բերդում, իսկ նրա յուրայինները՝ շրջակա բերդերում: Մայր Աթոռի ամրություններն էլ օգտագործվեցին որպէս ամրոց: Մահմադը պահանջեց, որ Մայր Աթոռը դիմադրի թշնամուն: Իր հերթին՝ Ջաֆարը խանն աշխատում էր իր կողմը գրավել հայոց կաթողիկոսին՝ խոստանալով իրենց բարեկամությունը: Եկավ նաեւ Յուսեյնը, եւ պատերազմը բորբոքվեց նոր ուժով: Շատ գյուղեր կրակի տրվեցին, եւ Յուսեյնն ու նրա եղբայրը մոտեցան Էջմիածին: Ամենուրեք տիրեցին թալանն ու ավերը, կողոպտվեցին նաեւ կույսերի երեք վկայարանները, եւ բանակ դնելով Զասադի ափերին՝ տեսության հրավիրեցին կաթողիկոսին: Ղուկասը, չվստահելով թշնամու բարեկամությանը, չգնաց՝ պատճառաբանելով, թե ամրոցի իշխանությունն իր ձեռքում է: Վախենալով վտանգից՝ խոյեցիներն Էջմիածին պաշարումը վերացրին եւ վերադարձան Մակու

գավառ: Յայերը եւ Մայր Աթոռը մեծապէս տուժեցին ոչ միայն Յուսեյնի արշավանքից, այլեւ տեղացի մահմեդական ավազակներից: Դրանից հետո Մահմադը արշավեց Նախիջեւանի վրա եւ մեծ ավերածություններ գործեց: Յատկապէս տուժեցին հայերը: Մի պահ Մայր Աթոռի շուրջը պատերազմական գործողությունները դադարեցին, քանի որ Պարսկաստանում նոր ուժով ծավալվեցին գահակալական կռիվները: Յայերն այդ շրջանում կամեցան պայմանագիր կնքել Ռուսական կայսրության հետ՝ ներկայացնելով Յայաստանի ազատագրության երկու նախագիծ: Յուսիսային ծրագրի համաձայն, որ 1789 թվին Արդուջանը եւ Լազարյանը ներկայացրին Պոտյոմկինին, հստակեցվում էին Յայոց թագավորության եւ Ռուսաստանի հարաբերությունները: Երկրների միջեւ հավերժ դաշինք պետք է կնքվեր: Ռուսական որոշ գորագնդեր պետք է մնային Յայաստանում: Յայերը ոսկու եւ արծաթի հանքերից պետք է հարկ վճարեին, եւ կողմերը պարտավորվելու էին պատերազմի ժամանակ միմյանց օգնել: Յայոց թագավորը պետք է ընտրվեր կայսրուհու կամքով եւ օժտվեր Էջմիածնում: Նա աթոռանիստ պետք է դարձներ Վաղարշապատը, Անին կամ Այրարատում մեկ այլ վայր: Նոյան տապանի, Լուսավորչի եւ Դաստառակի շքանշաններ պետք է հաստատվեին, ազգային դրոշմ պետք է ունենար կարմիր, կանաչ եւ կապույտ երիզներ, զինանշանը պատկերելու էր միազուրկ արծիվ եւ երկու

առյուծ, նախարարական հին տների ներկայացուցիչների իրավունքները պետք է ճանաչվեին: Գյուղերը կալվածք կարող էին լինել, բայց ճորտությունը պիտի արգելվեր: Կաթողիկոսը պետք է ընտրվեր հայոց թագավորի առաջարկությամբ: Երկու երկրների միջեւ առեւտրական պայմանագիր եւ փախստականների վերաբերյալ դաշնագրեր պետք է կնքվեին: Ռուսական 6000-անոց բանակը պետք է տասը տարով մնար Յայաստանում: Յետո այդ թիվն իջնելու էր 4000-ի, 15 տարի հետո՝ 2000-ի, իսկ 20 տարուց հետո բանակը պետք է հանվեր Յայաստանից: Այդ բանակը պահելու համար հայերը 60000 թուման պիտի հատկացնեին: Կեսը՝ դրամով, կեսը՝ պարենով: Չորրորդ թվի հետ կապված՝ այդ գումարը պակասելու էր: Յայ գինվորությունը եւ ամրոցները ռուսական հրամանատարի ենթակայության տակ պետք է գտնվեին: Յայերը պետք է վճարեին 20 մսխալ գուտ ոսկի, 3 ձի եւ 6 խոյ: Յայերը բարեկամ պետք է լինեին ռուսների բարեկամների, թշնամի՝ թշնամիների հետ: Պատերազմի ժամանակ ռուսներին օգնության պետք է ուղարկեին 6000-անոց զորք: Գերմանական կայսրը ճանաչվելու էր իրավարար երկու երկրների համար: Ծրագիրը պատրաստվել էր 1779 թվին եւ թորգմանվել 1786-ին: Ռուսական արքունիքին ներկայացվեց ծրագիր նաեւ հայկական կողմից, սակայն երկուսն էլ գործնական արդյունք չունեցան, քանի որ ռուսական կողմը պարզ հայտարարեց, որ պայմանագրերը պետություններին միջեւ են կնքվում:

Պարսկաստանում սկսեց ուժեղանալ դաշարների ցեղապետ Աղա Մահմադ խանը: Նա ցեղապետ Մուհամեդ-Յուսեյնի որդին էր եւ Ալի-Ադիլ շահի հրամանով ներքինացվել էր դեռ վեց տարեկան հասակում, իսկ հայրն սպանվել էր Զեքիյի հրամանով: Դրանք նրա մեջ ատելություն առաջացրին, եւ նա, ամեն միջոցի դիմելով, տիրեց Մազանդարանին, իսկ հետո՝ ողջ Պարսկաստանին: 1794 թվին նա դարձավ Պարսկաստանի տիրակալ, սակայն շահ եւ շահնշահ տիրոջն իր վրա չվերցրեց: Իր մայրաքաղաքը դարձրեց Թեհրանը, իսկ Սպահան եւ Շիրազի ամրությունները քանդել տվեց: Նա իր տիրապետությունը հասցրեց նաեւ հայերի վրա: Իր գերիշխանության տակ առավ Արեւելյան Կրաստանը: Յերակը, որ 1783 թ. հուլիսի 24-ին Ռուսաստանի հետ պայմանագիր էր կնքել, հայտնվեց Աղա Մահմադի թշնամիների շարքում: Աղա Մահմադը կամենում էր վերականգնել Պարսկաստանի երբեմնի հզորությունն ու փառքը: 1795 թվին նա մեծ բանակով արշավեց Արցախ, պաշարեց Շուշին եւ գորք ուղարկեց Երեւանի վրա: Երեւանի Մահմադ խանն ամրացավ Երեւանի բերդում, իսկ Ղուկասը Մայր Աթոռի գանձերը 21 սայլով ուղարկեց Տիֆլիս՝ կարծելով, թե այնտեղ պահով է: Դրանցից 6 սայլ Մահմադի ձեռքն ընկավ, չնայած Ղուկասը նվերներով փորձել էր վանքն ազատել ավարառությունից: Աղա Մահմադը շարժվեց Տիֆլիս եւ գրավեց այն 1795 թվի սեպտեմբերի 18-ին: Անասելի էին կոտորածներն ու թալանը: 16000 աղջիկ ու տղա գերի տարվեցին: Յերակը հազիվ փրկվեց՝ սպառնալով Թեյլափի կողմերին: Աղա Մահմադի հետ էր հայոց Մեջլում մեկը, որն իր կողմից



մեծապէս նպաստել էր Աղա Մահմադի հաջողությանը, եւ ինքն էլ առաջարկել էր շարժվել Տիֆլիսի վրա: Իսկ Ղուկասն ամեն ինչ արեց, որ հայ ու վրացի գերիներին փրկագնի: Ղուկասը շատերին էր դիմել, որ փրկագնեն Մահմադի ձեռքն ընկած սայլերի հարստությունը եւ վերադարձնեն վանքին: Նա նամակ գրեց անգամ Մեջլումին: Աղա Մահմադի արշավանքին հաջորդեց ռուսական բանակի արշավանքն Այսրկովկաս՝ Չաբուփի գլխավորությամբ: Նրա հետ էր Յովսէփ Եպիսկոպոս Արդուջանը: 1796 թվի սեպտեմբերին ռուսները մտան Գանձակ: Զրիստոնյաները ռեզոլուցիոն, իսկ մատմեղականները եւ անգամ Աղա Մահմադը շփոթության մատնվեցին: Սակայն Եկատերինա Բ կայսրուհին 1796 թվի նոյեմբերի 16-ին կաթվածահար եղավ եւ 37 ժամվա հոգեվարքից հետո մահացավ: Եվ այդ ժամանակ նրա որդի Պավելը, որ թշնամացած էր մոր հետ, Չաբուփի բանակին կարգադրեց ետ դառնալ: Ղուկասը, անշուշտ, ուրախացել էր ռուսների արշավանքով, սակայն խոհեմաբար սպասում էր դեպքերի զարգանալուն:

Շարունակությունը՝ էջ 4

Բ. Ի. ՂԱՏԿՈՎ

ՎՆԻՐՎԿ ՏՆՏԵՍԻ ՎՌՎԿԸ

ՄԱՀԱՉԴ


Ի Տեր հանգավ Շնորհք Ժ. վրդ. Գասպարյանը

Սկիզբը՝ թիվ 4
Այսպէս, երանելի Ֆեոֆիլակտի կարծիքով, ընդհանրապէս ուզածը հարստություն, որի տնտեսվարողն այն ծառայեցնում է լոկ իր շահերին, կոչվում է անիրավ հարստություն: Ըստ Տիրոջ ցուցումի՝ նման հարստությունն աղքատներին բաժանելը դառնում է միջոց՝ բարեկամներ ձեռք բերելու, որոնք էլ կարող են իրենց բարերարներին ուղեկցել հավիտենական օթեան: Զանի որ երկրային ողջ հարստությունը պատկանում է Աստծուն՝ որպէս աշխարհում գոյություն ունեցող ամեն ինչի միակ սեփականատիրոջ, իսկ մարդիկ նման հարստության լոկ ժամանակավոր կառավարիչներն են՝ նշանակված հսկիչները, ուստի պարտ են հաշիվ տալ իրենց Տիրոջը: Այստեղ ոչ մի կասկած չի կարող: Սակայն այն, որ կառավարիչները պարտավոր են բաժանել աղքատներին իրենց ենթակայությանը հանձնված ողջ հարստությունը մինչեւ վերջին թելը՝ իրենց ոչինչ չթողնելով, կարելի է փոքր-ինչ կասկածի ենթարկել: Զրիստոնք, որպէս Աստուց առաքված շնորհներ, երկրային բարիքների օգտագործումը երբեք չի դատապարտել: Նա պահանջում է միայն, որ մենք չհամարենք մեզ այդ բարիքների լիակատար տերն ու անպատասխանատու տնօրէնը: Նա պահանջում է, որ մենք այդ բարիքներն ընդունենք որպէս Աստծո ունեցվածք եւ կառավարելով դրանք՝ չմոռանանք մերձավորին սիրելու Նրա պատվիրանը եւ բարին գործենք նրանց համար՝ քաղցածներին ուտելիք տալով, ծարպկներին՝ ջուր, օտարներին մեր մէջ առնելով, մերկերին հագցնելով, հիվանդանոցներում ու բանտ-



րում գտնվողներին այցելելով (Մատթ. ԻԵ 34-40): Չար մշակներն անարգվեցին ոչ թե նրա համար, որ օգտվեցին իրենց վարձակալության տրված այգու բերքից, այլ այդ բերքից Տիրոջ պահանջած բաժինը Նրա կողմից իսկ առաքված ծառային չտալու համար, նրա համար, որ կամենում էին ողջ այգին յուրացնել: Յարավոր չէ, որ Տերը պարտադրի աղքատներին տալ այն ամենը, ինչ մենք ունենք՝ մեզ եւ մեր ընտանիքին ոչինչ չթողնելով: Այդ իսկ պատճառով երանելի Ֆեոֆիլակտի կարծիքը, թե հարկ է անիրավ կոչել ուզածը հարստություն, հետեւաբար եւ դրա նաեւ այն մասը, որը կառավարողը պահում է իր շահի համար, հազիվ թե կարելի լինի ճիշտ համարել:

ինձ թվում է, որ դա նրա կարծիքը չէ, այլ ուղղակի թերասում է, մտքի անավարտություն, ինչի հաստատումն է նրա «եղբայրների հետ կիսել այդ հարստությունը» արտահայտությունը, ինչը նշանակում է, որ բաժանվելիք ունեցվածքի մի բաժինը բնականաբար պետք է հասնի նաեւ բաժանողին: Սրանով հանդերձ՝ երանելի Ֆեոֆիլակտի բացատրությունը պատասխան չի տալիս այն ամենակիսավոր հարցին, որ վերաբերում է անիրավ տնտեսին, երբ կարող ենք առակը, այն է՝ արդյոք այդ տնտեսն արժանի էր գովեստի: Ինչո՞ւ Տերը նրան նմանվելու օրինակ բերեց: Եվ ինչո՞ւ Նա պատվիրեց բարեկամներ ձեռք բերել անիրավ հարստության միջոցով, եթե հարստությունն ինքնին չի կարող անարդար, անիրավ համարվել, այլ անիրավ է կոչվում այն դեպքում, երբ ձեռք է բերվում անօրէն կամ հանցագործ ճանապարհով, երբ ձեռք է բերվում չարագործության նպատակով եւ այդպէս էլ օգտագործվում կամ ձեռք է բերվում դրա՝ հարստության հանդէպ առանձնահատուկ մոլուցք ունենալու, որպէս կուռք պաշտելու պատճառով: Եվ մի՞թե Տերը կարող էր ասել, թե երկնային արքայության դռները կարելի է բացել անիրավ հարստությամբ: Այս բոլոր հարցերի պատասխանները մենք չենք գտնում Ֆեոֆիլակտի բացատրություններում: Մետրոպոլիտ Ֆիլարետ Մոսկովսկոյի կարծիքով՝ «Առակի իսկական նշանակությունը որոշարկվում է այլ գծերով: Նշանակված հսկիչը կառավարում է ուրիշի ունեցվածքը:



Խոր ցավով տեղեկացնում ենք, որ մարտի 3-ին ԱՄՆ Բելվիլ Իլլինոյի հիվանդանոցում ի Տեր հանգավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան, Ամերիկայի հայոց Արեւելյան թեմի հոգեւոր սպասավոր Շնորհք Ժ. վրդ. Գասպարյանը: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարքն էլ Ամենայն Յայոց Կաթողիկոսը եւ Մայր Աթոռի միաբանությունը առ Աստված աղոթք են բարձրացնում բարեհիշատակ հայր սուրբի հոգու հանգստության համար, սգում Շնորհք Ժ. վրդ. Գասպարյանի մահը: «Յիշատակն արդարոյն օրինութեամբ եղիցի»:

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՅՐԵՆԻՔ. ԲԱՆՔ ՀԱՅՈՒ

Ա. Հայոց հայրենիքի և հայ գրականություն

(պատմական ակնարկ)



Սկզբը՝ թիվ 4

Մամուլն այս տարիներին դարձավ հայ հանրային կյանքի առաջնորդող ուժը: Տարբեր էին հոսանքները, նախասիրությունները, բայց հրապարակագրական կյանքի մեծ մասը վերաբերում էր հայ ազգային գիտակցության վերագործունեին և ծրագրված ուղղվածությունը:

Ահա այս տեսադաշտում ավելի հստակ է ուրվագծվում գեղարվեստական գրականության հայրենասիրական բնույթը: Մեծանում էր հայրենասիրական վեպերի ընթացակարգի ամենօրյա պահանջարկը: Այստեղից՝ պատմավեպերի առատությունը: Իսկ հայրենասիրական քնարերգությունը հիմա արդեն հնչում էր դպրոցական և թատերական սրահների բեմերից և ներգործում հանրային գիտության վրա:

Այս տեսակետից առանձնահատուկ է Միքայել Նալբանդյանի և Ռաֆայել Պատկանյանի գործունեությունը: Գրեթե հասակակից երկու նորնախիջեանցիները դարձան հայրենասիրական գաղափարների դրոշակակիրներ: Շատ հուժկու էր հնչում Նալբանդյանի ձայնը: Նրա «Հայ մարդու հայրենիքը» (1858), «Սուրբ Մեսրոպի տոնին», «Օշական» և հատկապես «Ազատություն» (1859), «Իտալացի աղջկա երգը» (1859), «Մանկության օրեր» (1860), «Ապոլոնին» (1861) հայրենասիրական և քաղաքացիական բանաստեղծությունները սերունդներ են դաստիարակել: Ժամանակին շատ մեծ ներգործուն դեր են ունեցել նաև Ռաֆայել Պատկանյանի

1850-1860-ական թթ. գրած «Չարմայր նահապետի մահը», «Արաքսի արտասուքը», «Օրորոցի երգ», «Աղասու մոր երգը», «Հայ և հայություն» բանաստեղծությունները, «Զաչ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի և հայկական հարցի անդրադարձներ են նրա «Բողոք առ Եվրոպա», «Տաճկահայերի օրհասը», «Վեհաժողով» բանաստեղծությունները: Հայրենասիրական ոգին ներծծված է նրա ոչ միայն չափածո, այլև արձակ գրեթե բոլոր գործերի մեջ:

Հայրենիքի լուսավորության ու սիրո գաղափարների մարմնավորումներ են **Սմբատ Շահագիզի** «Լեւոնի վիշտը» (1865) պոեմը և «Ազատության ժամեր» (1860) գրքում զետեղված, ինչպես նաև գանազան այլ բանաստեղծություններ՝ «Ազգային վիճակ», «Ինձ մի սիրիր», «Երգ մեռնող հայրենասերի», «Կեցցե սուրբ գործը», «Հայաստան և նորա որդիք», «Բռնավոր սուլթան», «Եզվիտներ և Չեյթուն»:

Հայրենասիրական գաղափարները միաժամանակ բորբոքվում էին ինչպես արեւելահայ, այնպես և արեւմտահայ իրականության մեջ: Արեւմտահայ պոետիկայի և թատերգության ասպարեզում առանձնանում են **Սկրտիչ Պեշկյաշյանն ու Պետրոս Դուրյանը**: Նրանք բեմի համար գրեցին պատմական դրամաներ ու ողբերգություններ՝ փորձելով թուրքական բռնատիրության պայմաններում զինավառել ժողովրդին: Նշանակալի են Պեշկյաշյանի «Կոմնակ», «Արշակ Երկրորդ», «Վահան Մամիկոնյան», «Վահե», Դուրյանի «Արտաշես Աշխարհակալ», «Անկումն Արշակունիի հարստության», «Ասպատակություն պարսկացի Հայս կամ ավերումն Անի մայրաքաղաքին Բագրատունյաց», «Տիգրան Բ» երկերը: Իր քնարերգության մեջ հայրենասիրական գաղափարները Պեշկյաշյանը ծառայեցրեց պատմական այնպիսի իրողության փառաբանությանը, որպիսին Չեյթունի ապստամբությունն էր: Զաղաքացիական-հայրենասիրական բարձր ներշնչանքով են գրված այս շարքի չորս գործերը՝ «Հայ քաջորդին», «Մահ քաջորդույն», «Թաղումն քա-

ջորդույն» և «Հայ քաջուհին»: Հակառակ այս պատմական անդրադարձի՝ ավելի ռոմանտիկ շնչով են գրված Դուրյանի «Իդիք առ Հայաստան», «Երգ մարտին Վարդանանց», «Իմ ցավը», «Վիշտը հայուն» քերթվածները:

Բոլոր ձեռքերով գրականությունը փորձում էր ոտքի հանել, զինավառել ժողովրդին, բորբոք պահել նրա ազգային գիտակցությանը. բեմերում թատերական ներկայացումներն էին ու ասմունքը, թերթերում շարունակաբար տպագրվող վեպերն էին, հրապարակագրական հոդվածները: Հավաքվում էր ազգային բանահյուսությունը, վերականգնվում էր ազգային երգը:

Հայրենասիրական շունչը մի նոր թափ առավ հայկական ռոմանտիզմի գրականության մեջ: Այս տեսակետից առանձնահատուկ են **Բաֆֆու և Մուրացանի** ստեղծագործությունները: Հայրենասիրական գաղափարներ ամեն ինչի մեջ՝ լինի բուն հայրենասիրական թեմատիկա, թե՛ սոցիալական կամ սիրային: Սա արդեն արմատական սկզբունք էր՝ առանց որի գրողները չէին պատկերացնում գրականության գործառնական-դաստիարակչական դերը: Այսինքն՝ գրականությունն իր դրսեւորման բոլոր ձեռքերով պետք է նպաստեր ժողովրդի հայրենասիրական վերագարթնքին: Այս առաջադրույթը Բաֆֆին իրականացրեց թե՛ կովկասահայ կյանքին նվիրված վիպակներում, թե՛ թուրքահայ կյանքին նվիրված պատմվածքներում և թե՛ հատկապես պարսկահայ կյանքին նվիրված «Սալպե» ու «Հարեն» վեպերում: Բաֆֆին առաջ է քաշում ռոմանտիկական հերոսի կերպարը, ում զլխավոր նպատակը հայրենիքին ծառայելն է:

Այս մտայնությունն առավել խորությամբ արտահայտվեց հատկապես նրա ծրագրային վեպերում՝ «Ջալալեդդին» (1878), «Խեթը» (1881), «Կայծեր» (հ. 1-2, 1883-1887): Սարհատի, Վարդանի, Միքայել Դուրյանի (Սալման), Ֆարհատի, Սարոյի, Սարգսի, Ասլանի, Ավոյի, Սոնայի, Մարոյի կերպարները Բաֆֆու հայրենասիրական գաղափարների կրողներն են, ովքեր զենքով, գաղափարով, լուսավորությամբ ծառայում են հայրենիքին:

Հայրենասեր ու նվիրված կերպարներ է ստեղծել նաև Բաֆֆին իր «Դավիթ-Բեկ» (1882), «Պարույր Հայկազն» (1884), «Սամվել» (1886) պատմական վեպերում: Այս դեպքում արդեն Բաֆֆու գաղափարական առաջադրությունները կենսագործում են պատմականորեն վավերական դեմքեր՝ Սամվելը, Մովսես Խորենացին, հանրահռչակ, բայց ազգին անօգտակար Պարույր Հայկազն-Պրոերեսիոսը և Դավիթ-Բեկը:

Մուրացանի համար ես, անկախ այն բանից, թե նա գյուղի կյանք է պատկերում, քաղաքային հարաբերություններ կամ պատմական իրադարձություններ, ամեն ինչի նպատակը հայրենիքին ծառայելն էր: Հայրենիք՝ հանուն որի նա առաջ է քաշում իր գյուղափրկիչ ծրագիրը («Նորհրդավոր միանունուհի», (1889), «Նոյի ազգավը» (1899), «Առաքյալը» (1902), հանուն որի քննադատում է քաղաքային բարքերը և ծաղրում քաղքեհական կենցաղը («Հասարակաց որդեգիրը», (1884), «Հարուստները զվարճանում են» (1884), «Ինչ լայել է» (1885) «Անպատճառ իշխանուհի» (1886), «Լուսավորության կենտրոնը» (1892), «Հատուկ թղթակիցը» (1902) և հակառակ դրան՝ օրինակելի հայրենասիրական վարքով է կերտում իր պատմական հերոսներին՝ Ռուզանին («Ռուզան կամ հայրենասեր օրհորդ», 1881), Անդրեաս Երեցին («Անդրեաս Երեց», 1897-1898) և Գեորգ Մարգարետունուն («Գեորգ Մարգարետունի», 1896): Հայրենասպառումի նույն այս ծրագրի մեջ իրենց որոշակի տեղն ունեն նաև Մուրացանի «Հայ բողոքականների քննակիցը» (1882) վիպակը և «Իմ կաթոլիկ հարսնացուն» (1885) վեպը: Մուրացանի միտումնավորությունը գրականության մեջ ուներ միմիայն մեկ նպատակ. ինչ գնով էլ լինի, փրկել հայրենիքը:

Նույն այս շրջանի մեջ պետք է դիտել նաև **Շերեմեյի** պատմավիպասանությունը՝ «Երկու թ ճարու» (1879), «Թեոդորոս Ռշտունի» (1881), «Թորոս Լեւոնի» (1887), և **Պերճ Պռոշյանի** «Սկիզբն երկանց» (1892), «Հուն» (1900) վեպերը: Իսկ Պռոշյանի մյուս վեպերը ժողովրդին համախմբում են ազգագրության շուրջ՝ հիշեցնելով կենցաղի ու սովորույթների մանրամասները:

Շարունակությունը՝ էջ 6

ՀԱՅՈՒՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՂՈՒԿԱՍ Ա ԿՎՐՆԵՉԻ (1780-1799)

Սկզբը՝ էջ 3

Նա ոչ միայն ռուսների նահանգի լուրն ստացավ, այլև տեղեկություն՝ դեպի Հայաստան Աղա Մահմադ իսկի նոր արշավանքի մասին: Աղա Մահմադը շարժվեց դեպի Շուշի, նրա եղբայր Ալիոլունի՝ Երեւան: Ամենուրեք այլանդակ բռնություններ եղան: Աղա Մահմադը 1797 թվի մայիսի վերջին գրավեց Շուշին, որտեղից Իբրահիմը փախել էր Կովկասյան լեռներ: Շուշիում պարսից տիրակալն սպանվեց իր երկու սպասավորների կողմից, որոնցից մեկին չնչին պատճառով նա պատրաստվում էր հաջորդ օրը մահապատժի ենթարկել: Եվ այդ սպասավորը մահմեդականացված հայ էր, որը խնդրել էր անմեղ հայերին խնայել: Այդ մարդը Ջամշուդն էր, որի տանը հյուրընկալվելով՝ Աղա Մահմադը կողոպտել էր նրան նույնպես: Նրան հաջորդեց Բաբա խանը, որն Աղա Մահմադի եղբորորդին էր: Նա շահ հռչակվեց Ֆաթալի անունով:

Ֆաթալին խաղաղ բարք ուներ և թույլատրեց, որ նահանգներում բռնապետները կուսակալ-

ների վերածվեն: Երեւանում Ալիոլունի էր, որ կուզենար խանությունը ձեռք ձգել, բայց քաղաքացիների դիմադրության հետեւանքով ստիպված եղավ հեռանալ: Երեւանի նախկին բռնապետը՝ Մահմադը, որ աքսորված էր, թույլտվություն ստացավ վերադառնալու: Իբրահիմն էլ համարձակվեց Շուշի վերադառնալ, և դաժան բռնությունները վերսկսվեցին: 1797 թվի հոկտեմբերի 29-ին Օշականում ավազակներն սպանեցին խամսեցի Հակոբ Եպիսկոպոսին, և ոչ ոք չպատժվեց: Կռիվները շարունակվեցին Դավրեթի, Խոյի և Երեւանի խաների միջև: Դրանից շատ տուժեց Մայր Աթոռը: Գործը հասավ այնտեղ, որ Խոյի Ջաֆարոլունի՝ իր մարդկանցով, 14 օր մնաց վանքում՝ մեծապես վնասելով միաբանությանը: Նրան քշել էին Խոյից, և նա թափառում էր Էջմիածնի շրջակայքում, Բերդոլ լեռան և Կաղզվանի կողմերում: Հետո հաստատվեց Թալինում և յուրայիններին սփռեց Արագած լեռան լանջերին: Նա նոր պատուհաս դարձավ հայերի համար: Արցա-

խում և Գանձակում, իսկ ավելի շատ Վրաստանում ժանտախտ սկսվեց: Հերակլին փոխարինած Գեորգի թագավորը Ղուկասից քանկաց խնդրեց սուրբ գեղարդը, և կաթողիկոսն ստիպված եղավ զիջել: Հերակլը մահացել էր 1797 թվին, և նրա ավագ որդին՝ Գեորգին, նրան հաջորդեց: Նրա թագավորությունը Ֆաթալին հաստատեց, քանի որ ընդունել էր իր գերիշխանությունը, սակայն ժանտախտի պատճառով հեռացել էր Կախեթի կողմերը:

Տեսնելով երկրի ավերը՝ Ղուկասն էլ իր հայացքը հառել էր դեպի հյուսիս՝ Ռուսական կայսրություն: Ռուսների հեռանալուց հետո նա աշխատում էր ձեռք բերել պարսիկների համակրանքը, սակայն դա այնքան էլ հաստատուն չէր: Չգալով, որ ոչ պարսիկներից կարող էր լավություն սպասել և ոչ էլ օգնություն՝ վրացիներից, նա 1797 թին՝ Պավել կայսեր թագավորությունից ութ ամիս հետո, որոշեց նրան շնորհավորել՝ գահ բարձրանալու կապակցությամբ: Նա խնդրեց նրա պաշտպանությունը և հայցեց նրանից



նույնպիսի հրովարտակ, ինչպիսին տրվել էր Սիմեոն կաթողիկոսին: Պավելը, հեռահար նպատակներով, նրա առաջարկները լավ ընդունեց: Պատասխանը Ղուկասին չհասավ, բայց լուր անելով այդ ամենի մասին՝ նա շնորհակալություն հայտնեց Արղությանին և մյուսներին, իսկ 1799 թվի փետրվարի 12-ին խնդրեց հրովարտակի և նախարարապետի նամակի պարզ պատճենները: Բնագրերը կարողացան ուղարկել ավելի ուշ: 1799 հոկտեմբերի 15-ին Ղուկասը հատուկ կոնդակով շնորհակալություն հայտնեց Պավելին: Այս ընթացքում Ղուկասի առողջական վիճակը վատթարացավ, և 1799

թվի դեկտեմբերի 28-ին կնքեց իր մահկանացուն և թաղվեց Սբ Գայանե եկեղեցու գավթում: Նա պաշտոնավարեց 19 տարի 5 ամիս, ավելի ճիշտ՝ 19 տարի, 4 ամիս և 26 օր:

Ուղղակի ապշել կարելի, թե այդ խառը, դաժան ու անհանգիստ ժամանակներում ինչպես է Ղուկաս կաթողիկոսը գաղղվել շինարարական գործունեությամբ: Ավելին. ավերների պատճառով նա ստիպված էր հաճախ ձեռնամուխ լինել վերանորոգման ու վերաշինության: Նա իր հեղինակությամբ կարողանում էր հայ մեծամեծներին գումարներ ստանալ և դրանք ծախսել շինարարության վրա: Չհաշված Էջմիածնում իրականացրած շինարարությունը՝ նա Արղությանի ծախսով նորոգեց Սանահնի վանքը, որը գրեթե ամայացել էր: Նա նորոգեց վանքի քանդանք կամ աղբյուրը, մի շարք տեղերում վերնահարկեր ավելացրեց, սենյակներն ընդարձակեց և շատացրեց: Այդ ամենն արվել է 1784 և 1785 թվերին, սակայն որոշ գործեր շարունակվել են մինչև 1797 թվը: Բարերարները եղել են հեռու վայրերից, քանի որ Մայր Աթոռում հնարավոր չէր նվիրատուներ գտնել:

Շարունակելի
Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՆՅԱՆ
77 ԳԱՍ թղթակից անդամ,
պրոֆեսոր

ԷՄԱՆՈՒԵԼ ՎԱՐԱՆՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ 2014-ի թիվ 3-4

Այն, ինչ ներկայացվում է վերը բերված դրվագում, միանշանակ կորուստ էրեւոյթ էր այդ ժամանակաշրջանում ապրած հայերի համար: Չարմանակ է, բայց փաստ, որ ժամանակակից Հայաստանում՝ հատկապես գյուղական համայնքներում, տակավին պահպանվել է վերը նկարագրված եւ XXI դարի քաղաքացուն առնվազն գավեշտական թվացող այդ սովորույթը: Սակայն մեր ժողովուրդը, որի գգալի մասը դեռեւս բավականին ավանդապաշտ ու պահպանողական է, միանգամայն բնական է համարում հին բարքերի ու սովորույթների, անցյալի հոգեկերտվածքի ու արժեհամակարգի պահպանումը: Մի կողմից նման մոտեցումը կարելի է որակել իբրեւ հետադիմության դրսեւորում, մյուս կողմից՝ ազգային մշակութային առանձնահատկությունների պահպանում, այն հատկապես փոքր ազգերի համար հույժ կարեւոր է գոյապահպանման առումով: Գուցե այս պարզ ճշմարտության գիտակցումն է, որ հայրենի մեծամասնությանը, մասնավորապես Էմանուել Վարանյանի պատկերած հայերին դրոյում է այդքան ամուր կառչել էթնիկ սովորույթներին: Սակայն եկեք հարցին մոտենանք այլ տեսանկյունից. որքանով է արդարացված հասարակության միջամտությունը, եթե չասենք՝ ներխուժումն անհատի ներսնական կյանք: Էմանուել Վարանյանի վեպում ներկայացվածը հենց այդ դեպքն է: Դատելով սփյուռքահայ արձակագրի երկից՝ գյուղաբնակ հայերը գործնականում անձնական ազատություն չունենին: Այն ամենը, ինչ կատարվում էր հայ ընտանիքներում, վերահսկվում էր համայնքի կողմից, եւ եթե այդտեղ տեղի էր ունենում որեւէ բան, որը փոքր-ինչ հակասում էր հասարակության մեջ ընդունված կոդեքսին, դա արժանատի մեջ ընդունված կոդեքսին, դա արժանատի մեջ ընդունված կոդեքսին պարտավանքի: Ժամանակին նույնիսկ Հյուսիսային Եվրոպայում եւ Ամերիկայում էին առկա պորիտանության նման ծայրահեղ դրսեւորումները, սակայն դարերի ընթացքում մարդ-

կության առնվազն մի հատվածը հասկացավ, որ բացահայտ ներխուժումն այլոց ներսնական կյանք այնքան էլ արդարացված չէ: Հայ ժողովուրդը, մասնավորապես Էմանուել Վարանյանի հերոսներն ակնբերաբար տրամազծորեն այլ մոտեցում ունեն «անձնական կյանք» ասվածի հանդեպ: Նրանց կյանքը գործնականում լիովին կանոնակարգվում էր հայապարսկական հասարակական էթիկայի օրենքներով ու կանոններով: Համաձայն դրանց՝ որեւէ անհատ իրավունք չունի ինքնուրույն որոշելու իր տեղն այս աշխարհի երեսին: Անհատը պետք է հարմարվի հասարակության պահանջներին: Ամեն մարդ պետք է ներդաշնակորեն ապրի շրջապատի հետ: Ինչպես ասում է Վարանյանի պատկերած հարսանյաց արարողության հյուրերից մեկը. «Մեր ամուսնությունը, ծնունդը եւ մահը համայնքի ուրախությունն են ու վիշտը» (տե՛ս Varandyan E., Նույն տեղում, էջ 208): Այս պահին ակամայից հիշում եմ Բալթյանի մեկնաբանությունը՝ կապված Էմանուել Վարանյանի վեպի՝ արտաքին աշխարհից անբնականորեն տարանջատված լիներու մասին:

Էմանուել Վարանյանն ակնհայտորեն քաջատեղյակ է եղել իր գրվածքի սոցիալ-պատմական ենթատեքստին: Մի կողմից՝ արձակագրի հերոս Սասունը նկատում է, որ ներկայացված պատմությունը տեղի էր ունենում մեծ պատերազմից մի քանի տարի առաջ: Այդ պատերազմը մի հակամարտություն էր, որը պետք է գլխավոր շրջեր իր ընտանիքի կենսածեղ: Մյուս կողմից՝ հայագրի երիտասարդը շարունակ խոսում է համայնքային խրախճանքների սոցիալ-հոգեբանական ներազդեցության մասին. «Մարդկանց երկար ու ձիգ դարեր էին հարկավոր, որպեսզի նրանք սովորեին ապրելու արվեստը: Աշխարհի ոչ մի այլ անկյունում տեղ չկա բնական գեղեցկության, պարզության եւ ոգեշունչ կրթության հաջող միախառնության համար» (տե՛ս Varandyan E., Նույն տեղում, էջ 22): Էմանուել Վարան-

յանի գրքից մեջբերված այս դրվագը, անկասկած կարելու է, քանի որ դրանում առկա է մի թաքնված ակնարկ, համաձայն որի՝ հայերը հարատեւելու մեծ ուժ ու կարողություն ունեցող ազգ են: Անվերջանալի խնդիրներն ու սպառնալիքները հայ ժողովրդին սովորեցրին վայելել տվյալ պահի ուրախությունը, ինչպես օրինակ՝ մեր կողմից քննարկվող ամերիկահայ գրողի վեպում պատկերված հարսանեկան խրախճանքը:

Չնայած հայերն իրենց եւությամբ գուսպ են եւ ծածկամիտ, նրանք չեն թաքցնում իրենց հույզերը: Այս առումով հայերը, անշուշտ, տարբերվում են արեւմտյան ազգերից՝ իհարկե չհաշված որոշ բացառություններ: Ի դեպ, հայերն արեւմտյան ժողովուրդներից տարբերվում են նաեւ կարգ ու կանոնի մասին ունեցած իրենց պատկերացումներով: Սրանում մենք համոզվում ենք Սասունի մեծ քեռու ու Մարինայի հոր գրույցից: Քեռին ասում է հարսնացուի հորը, որ կարգ ու կանոնը հանդիսանում է քանտերոդ դարի կարգախոսը: Իսկ Մարինայի հայրը հետեւյալ կերպ է արձագանքում այս պնդմանը.

«Արեւմուտքի մարդկանց գրպանում եղած մեխանիկական սարքը նրանց ամենահավատարիմ ընկերն է: Պատի ժամացույցը հուշում է նրանց ճաշելու եւ ճաշ ավարտելու ժամանակը: Նրանք քնում են մեքենաների պես, աշխատում են մեքենաներով, ճանապարհորդում են մեքենաներով, գրում են մեքենաներով, խոսում սարքերի օգնությամբ՝ մեծ տարածությունների միջուկ, նրանք պարում են մեքենաների պես, նրանք գետնի վրայով, օդով ու գետնի տակով ճանապարհորդում են մեքենաներով, բարձր շենքերի վրա մազկցում են մեքենաների օգնությամբ: Գրագ կգամ, որ այդ մարդիկ հենց իրենք մեքենաներ են: Ինձ դուր չի գալիս նման ապրելակերպը: Ես սիրում եմ մոռանալ ժամանակի մասին: Երբ ես մի թաս գինի եմ խմում, ես չեմ մտածում որեւէ այլ բանի մասին» (տե՛ս Varandyan E., Նույն տեղում, էջ 44):



Էմանուել Վարանյանի վեպից մեջբերված այս դրվագն ակնհայտ կերպով վկայում է միջմշակութային հակադրությունների մասին: Այն, ինչ միանգամայն բնական է արեւմտյան ժողովուրդների մեծամասնության համար (խոսքը կյանքի կանոնավորվածության մասին է), կարող է տարօրինակ, անհեթեթ եւ զավեշտալի թվալ Արեւելքում ապրող ազգերին, այդ թվում՝ հայ ժողովրդին: Իսկ արեւելյան ժողովուրդների «չկանոնակարգված կենսածեղ» Արեւմուտքի ազգերը հավանաբար կգնահատեն որպես ամենաթողության եւ հետադիմության դրսեւորում: Անշուշտ, Վարանյանի գրքից մեջբերված դրվագի մեջ առկա են որոշակի հեգնանք եւ չափազանցություն: Գեղարվեստական արտահայտչության այս միջոցները կիրառվել են նաեւ ամերիկահայ գրող Փիթեր Նաչարյանի «Ուղեորություններ» վեպում՝ ամերիկացիների «տարօրինակ» սովորույթները եւ նրանց կյանքի ծայրահեղ կանոնավորությունը պատկերելու նպատակով:

Շարունակությունը՝ էջ 7

Քլայվ ԼՈՒԻՍ

Սկիզբը՝ 2014-ի թիվ 3-4

Բրիտանացի հանրահայտ գրող Քլայվ Լուիսի վերոհիշյալ գործը քրիստոնեական թեմաներով երգիծական մի ստեղծագործություն է, որ ներկայացնում է հառնակիչ կոչվող դեւի նամակները նրա գարմիկ Օշինդրին: «Խառնակիչ նամակները» ստեղծագործությունը՝ որպես առանձին գիրք, առաջին անգամ հրատարակվել է 1942 թվականին:

4

Իմ սիրելի Օշինդրիկ,

Զո վերջին նամակում եղած սիրողական առաջարկությունները զգուշացնում են ինձ, որ ժամանակն է, որ ես քեզ ամբողջապես գրեմ աղոթքի ցավալի թեմայի մասին: Դու կարող էիր եւ չգրել այն մեկնաբանությունը, թե իր մոր համար խնամարկյալիդ կատարած աղոթքի մասին իմ խորհուրդը՝ «պարզվեց՝ առանձնապես անհաջող էր»: Չի պատշաճում, որ գարմիկն այդպիսի բաներ գրի իր քեռուն կամ երիտասարդ փորձիչը՝ բաժանմունքի նախարարի տեղակալին: Սա նաեւ բացահայտում է պատասխանատվությունը սեփական անձից թողափելու տիպիկ ցանկություն. դու պետք է սովորես քո սխալների համար պատասխան տալ:

Լավագույնը, հնարավորության դեպքում, խնամարկյալին աղոթելու լուրջ մտադրությունից հեռու պահելն է ընդհանրապես: Երբ խնամարկյալը չափափաս նորադարձ է թշնամու բանակում, ինչպես քո այդ մարդը, սա ամենից լավ արվում է նրան քաջալերելով, որ հիշի (կամ մտածի,



թե հիշում է) մանուկ տարիքում իր արած թուրքական ման աղոթքները: Որպես արդյունք դրա հակազդեցության՝ նա կարող է նպատակ դնել կատարել ամբողջապես անբռնազբոսիկ, դեպի ներս ուղղված, ոչ պաշտոնական, չկանոնակարգված աղոթքներ, եւ սկսնակի համար սա իրականում կնշանակի ջանք թափել ներսում ստեղծելու համար մի մշուշապատ աստվածաշատական վիճակ, որը գերծ է կամքի եւ մտքի իրական կենտրոնացումից: Նրանք բանաստեղծներից մեկը՝ Քլայվը, գրում է, որ ինքը չի աղոթել «շարժվող շուրթերով եւ ծավված ծնկներով», այլ

ԽԱՂՆԱԿՉԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Նվիրվում է Զ. Թուկիենին (անգլիացի գրող, բանաստեղծ, բանասեր)

պարզապես «իր հոգին տրամադրել է սիրելու» եւ վայելել «աղաչանքի զգացումը»: Սա հենց այն աղոթքն է, որ մենք ուզում ենք: Եվ քանի որ դա մակերեսային նամակություն ունի լուրջության աղոթքի հետ, որը կատարում են նրանք, ովքեր շատ առաջ են գնացել Թշնամու ծառայության մեջ, խելացի եւ ծուլ խնամարկյալները կարող են այս վիճակի մեջ մնալ բավական երկար ժամանակ: Վատագույն դեպքում նրանք կարելի է համոզել, որ մարմնի դիրքը ոչ մի նշանակություն չունի նրանց աղոթքի ժամանակ, որովհետեւ նրանք շարունակ մոռանում են (ինչը դու միշտ պետք է հիշես), որ իրենք կենդանիներ են եւ որ ինչ որ իրենց մարմինն անում է, ազդում է իրենց հոգու վրա: Չվարճալի է, թե ինչպես են մահկանացուները միշտ պատկերացնում մեզ այնպես, թե մենք նրանց մտքի մեջ խորհուրդներ ենք դնում. իրականում մենք ամենից լավ հանում ենք դրանք: Եթե սա չհաջողվի քեզ, պետք է ձեռնարկես նրա մտադրությունը նրբորեն շեղել: Երբ նրանք հենց Թշնամու վրա են սեւեռվում, մենք պարտվում ենք, բայց կան միջոցներ՝ խափանելու սա: Ամենապարզը նրանց հայացքը Նրանից դեպի իրենց անձը շեղելն է: Այնպես արա, որ շարունակեն իրենց միտքը հսկել եւ փորձեն նրանում զգացումներ ստեղծել իրենց իսկ կամքի գործողությամբ: Երբ պետք է, որ նրանք ողորմություն խնդրեն նրանից, թող փոխարենն իրենք ողորմաժողության զգացումներ առաջ բերեն իրենց անձի

հանդեպ եւ թող չնկատեն, որ իրենք այդպիսի բան են անում: Երբ նրանք քաջության համար են աղոթում, թող իսկապես փորձեն քաջ զգալ իրենց: Երբ նրանք ասում են, թե թողության համար են աղոթում, թող ջանան իրենց ներված զգալ: Սովորեցրու նրանց գնահատել յուրաքանչյուր աղոթքի արժեքն իրենց փափագած զգացումն առաջ բերելու հաջողությամբ եւ երբեք թույլ մի՛ տուր, որ կասկածեն դրա վրա՝ տեսնելով, թե որքան այդպիսի հաջողություն կամ անհաջողություն է կախված տվյալ պահին իրենց առողջ, թե հիվանդ, թարմ ուժերով, թե հոգնած լինելուց: Բայց իհարկե այդ ընթացքում Թշնամին անգործ չի մնա: Ուր կա աղոթք, այնտեղ կա նաեւ Նրա անմիջական գործողության վտանգը: Նա անպարկեշտորեն անտարբեր է թե իր դիրքի մեծության հանդեպ, թե մեր՝ որպես գուտ հոգիների, եւ ծնրադրած մարդ-կենդանիների վրա Նա ինքնաճանաչողություն է հեղում անամոթաբար: Բայց նույնիսկ եթե Նա ձախողի շեղման քո առաջին փորձը, մենք ավելի նուրբ զենք ունենք: Սկզբում մարդիկ Նրա այն ուղղակի ազդեցությունը չեն ապրում, որից մենք, դժբախտաբար, խուսափել չենք կարող: Նրանք երբեք չեն ապրել այդ զգվելի լուսավորությունը, այդ ծակող ու այրող պայծառությունը, որը մեր կյանքին ուղեկցող մշտական ցավն է: Եթե դու նայես քո խնամարկյալի մտքի մեջ, երբ նա աղոթում է, դու դա չես գտնի:

Շարունակությունը՝ էջ 7

ԿԻՑ սեռայական

ՍՈՒՐԲ ԳՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԿՅՎՆՔՈՒՄ


Մեր հյուրն է Սմբատ Բախանյան Սարգսյանը

- Գաղտնիք չէ, որ ինչպես դարեր ու հազարամյակներ առաջ, այնպես էլ այսօր Աստվածաշունչ Մատյանը մարդկության ուշադրության կիզակետում է, շատերի հոգեւոր սնունդն ու մխիթարությունը: Տեր հայր, փորձենք հասկանալ՝ որն է Սուրբ Գրքի հիմնական նպատակը, ինչ դեր է նշանակություն ունի այն յուրաքանչյուրիս կյանքում:

- Աստծո խոսքն Աստծո հայտնությունն է մարդկությանը: Քանի որ Աստված խորհրդավոր ու անհայտ է, ապա Նրա խոսքն էլ խորհրդավոր կլինեք, եթե հողաբաշխ ձեռով մեզ չհայտնվեք: Սբ Պողոս առաքյալը, խոսելով անդրաշխարհային մասին, ասում է. «Գիտեմ մի մարդու ի Քրիստոս, որ տասնչորս տարի առաջ (մարմնով էր թե առանց մարմնի, չգիտեմ, Աստված գիտե) հափշտակվեց մինչև երրորդ երկինք... մինչև դրախտ եւ լսեց անպատում խոսքեր, որ մարդս արտոնված է խոսել... (Բ Կորնթ. ԺԲ 2-4):

Այսինքն՝ անդրաշխարհային եւ հոգեւոր իրականությունը վեր է մարդկային խոսքի տրամաբանությունից եւ հասկանալու համար ունի հատուկ ձեւակերպման անհրաժեշտություն: Մենք Աստծո եւ մեր փրկության մասին իմանում ենք Աստծո խոսքից: Սբ Գր. Տաթևացին, նկատի ունենալով մարդու անկումը, ասում է, որ մարդը փոփոխական է. ինչպես բարուց փոխվեց դեպի չարը, այնպես էլ կարող է նաեւ չարից փոխվել բարին, իսկ բարին մեզ փոխանցվում է Աստծո խոսքով: Ուրեմն մենք մեր կյանքը շտկելու եւ նորոգելու անհրաժեշտություն ունենք, որը հնարավոր է Աստծո խոսքով:

- Տեր հայր, ասացիք, որ մարդը փոփոխական է, մինչդեռ մենք գիտենք, որ Աստծո խոսքն անփոփոխ է, քանի որ Սբ Գրքին խորթ է որեւէ ժամանակավոր պոստություն, քանզի նրա խոսքն է՝ ճշմարտությունն է, որը հավետ արդիական հնչեղություն ունի... Աստծո խոսքը կարող է որեւէ ժամանակավորեալ համարվել:



- Երբեք, որովհետեւ Աստված անփոփոխ է, հետեւաբար Աստծո խոսքն էլ անսուտ է, չի կարող որոշ ժամանակ ճշմարիտ լինել, հետո կորցնել իր արդիականությունը: Ինչո՞ւ, որովհետեւ ճշմարտությունը մնում է նույնը: Ճշմարտությունն է՝ Յիսուս Քրիստոսն է, Ով էր Անձը մեզ համար գոհեց: Լինելով Աստված՝ խոնարհվեց մարդ լինելու աստիճանի: Աստծո Որդու մարդեղացումը, որի մասին գրված է Սուրբ Գրքում, ճշմարտության հայտնությունն է մեզ, այն քարոզվում է շուրջ 2000 տարի, սակայն դրանից առաջ էլ դարեր շարունակ մարգարեացվում են քարոզվում էր:

- Ի՞նչ բարեբար ազդեցություն է ունենում Աստծո խոսքն ընթերցողի հոգու, սրտի եւ մտքի վրա:

- Ասացի, որ Աստծո խոսքը հայտնություն է մեզ՝ մեր անձերի փրկության համար, այն մեր փոփոխման ուղեկիշն է: Բայց չմտածենք, որ Սուրբ Գրքը դասագրքի պես է, ո՛չ, քանի որ Աստծո խոսքն իր մեջ աստվածային ներշնչում ունի: Այն գրվել է Սուրբ Յոզովի ներշնչված մարդկանց կողմից: Եվ քանի որ

մենք Աստծո պատկերով եւ նմանությամբ ենք ստեղծվել, Աստծո շունչը, Սուրբ Յոզովի ներկայությունն ունենք մեր մեջ, ուստի անհրաժեշտություն ունենք այս խոսքից վեր ապրում ունենալու: Բնականաբար, Աստծո խոսքն ընթերցելիս մենք ապրում ենք այն ներշնչանքը, որն ապրել են ավետարանիչները՝ լցվելով Սուրբ Յոզովի, հաղորդակցվելով Աստծո հետ: Աստծո խոսքն ասում է. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով եւ քո ամբողջ հոգով եւ քո ամբողջ գործությամբ եւ քո ամբողջ մտքով. եւ պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը» (Ղուկ. Ժ 27), ուրեմն սիրել Աստծուն նշանակում է փափագել Նրա խոսքն իմանալ: Շատ կարեւոր է, որ մեր զգայարանները տարված լինեն բարի ապրումներով: Սբ Եփրեմ Ասորի ասում է. «Ուժերիդ ներածի չափով պատրաստիր քեզ ըստ կարելիության հաճախ ընթերցելու Աստվածաշունչը, որ ի մի բերի մտքերդ, որոնք ցրել էր թշնամին՝ իր խաբեպատիր հնարքներով չար խորհուրդներ ներշնչելով: Աստծո խոսքի ընթերցումը կարգի է բերում ցրված մտքերը եւ աստվածգիտություն պարգևում: Ուստի ջանասեր եղիր եւ վարժիր անձը ընթերցանությամբ ու աղոթքով, որպեսզի միտքդ լուսավորվի»: Մենք իսկապես մեր մտքերի լուսավորության եւ մեր կյանքի նորոգության անհրաժեշտությունն ունենք: Սա չի լինում առանց ինքնաճանաչողության: Եթե կարող ենք ասել, որ Աստվածաշունչը լույս է, ապա որքան մոտենանք լույսին, կտեսնենք մեր զգեստի բծերը: Մենք հաճախ ինքնախաբեության մեջ ենք ընկնում՝ մտածելով, որ լավ ենք: Աստվածաշնչի խոսքն ուղղում է մեր մտածումները, աշխարհայացքը: Հայրերից մեկն ասում է, որ Աստվածաշնչի պատվիրանների մանրակրկիտ պահպանությունը մեզ ինքնաճանաչողության է բերում, որովհետեւ մենք մեզ այ-

լուս չենք համեմատում մարդկանց հետ, այլ՝ Աստծո:

- Սուրբ Գրքի մեկնիչները մարդուն խորհուրդ են տալիս սուրբգրային պատմաների, հերոսների վարքերի մեջ նախ եւ առաջ տեսնել իրեն, իր սրտի մեղքերը, արատները, աշխարհասիրությունը, հպարտությունը եւ մյուս մեղքերը: Աստվածաշունչը բնավ չի սքողում, թաքցնում իր հերոսների թերություններն ու մեղքերը, սովորեցնում է մեզ Սոդոմոնի կռապաշտության, Դավթի մեղսագործության, Պետրոսի ուրացության մեջ տեսնել մեր անձերը... Ի՞նչ կասեք այս առնչությամբ:

- Աստվածաշնչի մեջ արդար մարդկանց մասին քիչ է խոսվում: Հիշենք Յոզ երանելուն: Երբ Աստված խոսեց Նրա հետ, պարզվեց, որ Յոզն էլ մեղավոր է: Նա, իր անձը համեմատելով մարդկանց հետ, արդար էր կարծում: Բայց Աստծո հետ համեմատվելով՝ հասկացավ, որ մեղավոր է: Եսայի մարգարեն ասում է, որ մարդկանց արդարությունը կեղտոտ լաթերի պես է: Ինչո՞ւ. որովհետեւ մենք բոլորս էլ կրողն ենք մահացու մեղքերի: Բարի, արդար մեկը չկա. յուրաքանչյուր մարդ անձնասեր է: Դրա համար էլ Տերն ապաշխարության է կանչում մեզ՝ մեր անձերի փոփոխությունը նկատի ունենալով, որն անհնար է առանց Քրիստոսի:

Եթե դա հնարավոր լիներ մարդկային ջանքերով, ապա Աստծո Որդին չէր մարմնանա եւ խաչի վրա չէր մեռնի մեզ համար: Եթե հնարավոր լիներ Աստվածաշունչը միայն կարգալից փրկվել, ապա Աստծո Որդու սուրբ Մարմնի եւ Արյան հաղորդության անհրաժեշտությունը չէինք ունենալ: Մեր կյանքը մահացու մեղքերով վերավորված է: Ուրեմն նախ պետք է հոգու հիվանդությունից ձերբազատվել:

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՅՐԵՆԻՔ. ԲԱՆՔ ՀԱՅՈՉ

Սկիզբը՝ էջ 4

Հայրենասիրական տրամադրությունները նոր թափ առան հայ նոր քնարերգության հիմնադիր **Հովհաննես Հովհաննիսյանի** պոեզիայում՝ ուղեկիշելով մի նոր ճանապարհ, որի շարունակողները պիտի լինեն Հովհաննես Թումանյանն ու Ավետիք Իսահակյանը: Հովհաննիսյանի հայրենասիրական քնարերգության մեջ կա ե՛ւ սոցիալական, ե՛ւ ազգային, ե՛ւ պատմական մոտիվ: Պատմական նյութով են գրված նրա «Արտավազը» (1887), «Վահագնի ծնունդը» (1904), «Լուսավորչի կանթեղը» (1904) բալլադները, «Սյունյաց իշխան» (1887) պոեմը, «Տղմուտ» (1887), «Վարդանանց օրը» (1888) բանաստեղծությունները: 1894-1896 թվականների ջարդերի արձագանք են «Սգո օրեր» (1896), «Նոր գարուն» (1887), «Արագն եկավ» (1887), «Աշուղ» (1887) բանաստեղծությունները: «Իմ հայրենիքը տեսե՛լ ես, ասա...», - ռոմանտիկ ոգեւորությամբ բացականչում է նրա քնարական հերոսը՝ կարոտով կերտելով հայրենիքի մի իդեալական կերպարը, ինչն ավելի ուշ Հովհաննես Թումանյանը պիտի ծաղրանմանության ենթարկեր՝ հայրենիքի գեղեցկությանը հակադրելով սոցիալական հակասություններն ու թշվառությունը:

Սոցիալական վիճակն այս անգամ թուրք հարստահարիչների կեղեքումների պայմաններում արտացոլվել է նաեւ **Վրթանես Փափազյանի** «Պատկերներ թուրքահայոց կյանքից» (1891), «Պատմվածքներ թուրքահայերի կյանքից» (1904) պատմվածքների եւ ակնարկների մեջ: Դա

արտահայտվել է նաեւ նրա «Չրույցներ» (1889-1904) եւ «Պատկերներ գյուղից» (1911-1912) շարքերում:

Հայրենասիրության ակունքն այս դեպքում դառնում է հայ կյանքի պատկերը հատկապես թուրքական բռնատիրության պայմաններում: Հայ կյանքի այս ծանր իրականությանն են նվիրված նաեւ **Ավետիս Ահարոնյանի** «Պատկերներ» (1899) շարքի գործերը, որոնց մեջ արտացոլված են (1894-1896) թթ. իրադարձությունները՝ համրոյան ջարդերը: Գրողը լայն համապատկերով ներկայացնում է հայության կյանքը թուրքական բռնակալության պայմաններում. դրա արտահայտություններն են «Խեղճերը» (1902) պատմվածաշարը, «Սեօրեր» (1897), «Ռաշիկ» (1897) վիպակները: Ահարոնյանը նաեւ Բաֆֆու ազգային-ազատագրական գաղափարների ժառանգորդն էր: Այս տեսակետից կարեւոր են նրա «Ազատության ճանապարհին» պատմվածաշարի գործերը (1898-1900), ինչպես նաեւ՝ «Մրրիկի սուրբը» (1903), «Լռություն» (1909) վեպերը: Այս մտայնությունների արտահայտությունն է նաեւ նրա «Արցունքի հովիտ» (1907) դրաման:

Արեւելահայ-արեւմտահայ գրականությունների ու գործերի մերձեցումը 20-րդ դարասկզբին դառնում է պահանջ: Այդ գիտակցությամբ «Գարուն» (1910-1912, Մոսկվա) տարեգիրքն իր երեք համարներում հավասարապես տեղ է տալիս երկու կողմի գրողներին: Առաջին գլխում Ահարոնյանի, Իսահակյանի, Կուրդիկյանի, Դեմիրճյանի, Փափազյանի, Շատուրյանի, Տերյանի հետ մեկտեղ տպագրվել են Սի-

րունի, Զյուֆեճյանը (Օշական), Մերուժան Պարսամյանը, Հրանտ Նազարյանը, երկրորդում՝ Շիրվանզադեն, Իսահակյանը, Դեմիրճյանը, Միքայել Մանվելյանը, Շատուրյանը, Կարեն Միքայելյանը, Տերյանը, նաեւ՝ Փայլակը, Զյուֆեճյանը (Օշական), Չիֆթե Սարաֆը, Հրանտ Նազարյանը, Ռուբեն Սեւակը, Մերուժան Պարսամյանը:

Երրորդ համարում հոդվածներ են: Հրաչյալի ե Դավիթ Անանուի «Անցյալի մեծարանքը (Հովհաննես Թումանյանի քնարը)» հոդվածը՝ այսպիսի դիպուկ բնորոշմամբ. «Հովհաննես Թումանյանը առանձնակի տեղ ունի գրված հայ Պառնասում, նա ոչ միայն հայ բանաստեղծ է, այլեւ հայկական առանձնահատկության բանաստեղծ»: Վերջին արտահայտությունն ընդգծում էմ ի հակադրություն ինքն իրենից հեռացած հայ գրականության: Տոլակ Խանզադյանը վերլուծել է Ավետիս Ահարոնյանի, Պողոս Մակինցյանը՝ Թումանյանի, Իսահակյանի ստեղծագործությունները: Հոդվածներ ունեն նաեւ Հ. Կուսկյանը (Արվյանի մասին), Ա. Ռուբենին (Շահագի մասին), Ա. Մարտունին (Հովհաննիսյանի եւ Շատուրյանի ստեղծագործության հասարակական արժեքի մասին): Մակինցյանը մի քանի դիպուկ դիտողություններ է անում «Աբու Լալա-Մահարի» պոեմի կապակցությամբ: Ինչպես Նիցշեն գրահաղաշտին, այնպես էլ Իսահակյանը Մահարուն խոսեցնում է ասույթներով, որոնք վերջին դեպքում հնչում են «հին, մաշված եւ նույնիսկ բանալ»: «Սերը քաղցր թույն է», - Սուլթան Մուհամմեդի



խոսքն է կնոջը, «Հզորի առաջ թույլն է մեղավոր», - ռուսական ասույթ է: Միեւնույն միտքն Աբու Լալան ծամծամում է պես-պես ձեւերով, եւ <...> այդ ձգձգվածությունը հոգնեցնում է... (տե՛ս էջ 362): Բայց նույն Մակինցյանը, չգիտես ինչու, «Գեղարվեստի» 4-րդ գրքում քննադատում է Ե. Ֆրանգուլյանի «Ավետիք Իսահակյանը որպես մտածող» հոդվածը, որտեղ «Աբու Լալա...»-ի կապակցությամբ նա զուգահեռներ է նշում Շոպենհաուերի, Բուդդայի, Օտտո Վայնլինգերի եւ Նիցշեի հետ: Վերջում էլ Մակինցյանը, Նիցշեի իսկ անդրադարձով, Ֆրանգուլյանին «գրադաշտի կապիկ» է անվանում:

Շարունակելի
Դավիթ ԳՍՄՊՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Քլայվ ԼՈՒԻՍ

ԽԱՌՆԱԿՉԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Սկիզբը՝ էջ 5

Եթե ուսումնասիրես նրա մտասերման առարկան, կտեսնես, որ այն մի խառնուրդ է՝ կազմված բավականին ծիծաղելի բազմաթիվ բաղադրիչներից: Այնտեղ կտեսնես պատկերներ՝ վերցված այն նկարներից, որ Թշնամուն պատկերում են Մարմնացում անունով հայտնի Նրա հայտնության խայտառակ ժամանակափոքրիկ ընթացքում: Այնտեղ կտեսնես ավելի անորոշ, թերեւս վայրենի ու պարզունակ պատկերներ՝ կապված մյուս երկու Անձերի հետ: Այնտեղ կգտնես անգամ նրա սեփական պաշտամունքը (եւ դրան ուղեկցող մարմնական զգացումները)՝ առարկայացած եւ պաշտամունքի առարկային վերագրված:

Ես դեպքեր գիտեմ, երբ այն, ինչ խնամարկյալն իր «Աստված» էր կոչում, իրականում գտնվում էր ննջասենյակի առաստաղի վերին ծախ անկյունում, կամ նրա սեփական գլխում, կամ պատից կախված խաչելությունում: Բայց ինչ էլ որ լինի այս բաղադրյալ առարկայի բնույթը, դու պետք է այնպես անես, որ խնամարկյալը շարունակի աղոթել դրան՝ այն առարկային, որն ինքն է ստեղծել, ոչ թե այն Անձին, Ով ստեղծել է նրան: Դու կարող ես նույնիսկ քաջալերել նրան մեծ կարեւորություն տալու իր բաղադրյալ առարկայի շտկմանն ու բարելավմանը եւ ամբողջ աղոթքի ընթացքում այն շարունակ երեսակայություն մեջ պահելուն: Որովհետեւ եթե նա երբեք է հասկանա տարբերությունը, եթե երբեք է գիտակցորեն ուղղի աղոթքը «ոչ թե նրան, ինչ ես եմ կարծում, թե Դու ես, այլ ինչ Դու գիտես, որ Դու ես», մեր վիճակը միաժամանակ հուսահատական կլինի: Եթե նրա սեփական մտածություններն ու մտապատկերները մի կողմ գցվեն կամ պահպանվելու դեպքում լինի այն կատարյալ գիտակցությունը, որ դրանք ենթակայական բնույթ ունեն, եւ մարդն իրեն ամբողջապես հանձնի կատարելապես իրական, արտաքին, անտեսանելի Ներկայությանը, որ այնտեղ՝ սենյակում նրա հետ է՝ երբեք չճանաչվելով նրա կողմից այնպես, ինչպես ինքն է ճանաչում նրան, այդ ժամա-

նակ կարող է չնախատեսվածը պատահել: Այս վիճակը՝ աղոթքի մեջ հոգու այս իսկական մերկությունը, թույլ չտալուն քեզ կոգնի այն փաստը, որ մարդիկ իրենք այնքան էլ չեն փափագում այդ վիճակը, որքան կարծում են: Մի այսպիսի բան կա. նրանք պիտի ստանան ո՛չ այն, ինչ ակնկալում են:

Քո սիրառատ քեռի՝ ԽԱՌՆԱԿՉ

5

Իմ սիրելի Օշինդրիկ,

Փոքր-ինչ հիասթափեցնող է, որ աշխատանքիդ մանրակրկիտ զեկույցին սպասելով՝ փոխարենն այնպիսի մշուշապատ դատարկաբանություն եմ ստանում, ինչպիսին քո վերջին նամակն է: Ասում ես՝ «Լուրախությունից խենթանում ես», որ եվրոպացի մարդիկ մի ուրիշ պատերազմ են սկսել: Ես շատ լավ տեսնում եմ, թե քեզ ինչ է պատահել: Դու ոչ թե խենթացած ես, այլ հարբած միայն: Տղերի արանքով կարդալով խնամարկյալիդ անքուն գիշերված մասին քո շատ անհավասարակշիռ զեկույցը՝ ես կարող եմ միանգամայն ճշգրտորեն պատկերացնել քո մտքի վիճակը: Քո աշխատանքային գործունեության մեջ առաջին անգամ դու ճաշակել ես այն գինին, որը մեր բոլոր ջանքերի վարձատրությունն է՝ մարդկային հոգու տվյալանքն ու խռովքը: Ես երիտասարդ ուսերի վրա ծեր գլուխ չեմ սպասում տեսնել: Խնամարկյալդ արձագանքե՞ց ապագայի վերաբերյալ քո ստեղծած որոշ սարսափազդու պատկերների: Աշխատեցի՞ր երջանիկ անցյալին նետված, ինքնախոնարհությամբ լեցուն հայացքների վրա: Արդյոք խնամարկյալիդ ստամոքսախորշում որոշ հիանալի ցնցումներ տեղի ունեցա՞ն: Դու քո ջութակը լավ նվագեցի՞ր, չէ՞: Լավ, լավ, այդ բոլորը շատ բնական է: Բայց լավ հիշիր, Օշինդր, նախ պիտի լինի պարտականությունը, հետո՝ հաճույքը: Եթե քո կողմից որեւէ Ներկա ինքնահաճույթն արդյունքում որսի կորստին հանգեցնի, դու կթողնվես հավիտենապես ծարավելու այն ումպին, որն այժմ, առաջին անգամ ճաշակելով, այդպես վայելում ես: Եթե, մյուս կողմից, հիմա կայուն կերպով ու սառը գլխով գործելով՝ դու կարողանաս



վերջապես ձեռք բերել նրա հոգին, նա քոնը կլինի հավիտյան՝ որպես հուսահատության, սարսափի եւ ապշանքի արցունքով լի կենդանի բաժակ, որը դու կարող ես մոտեցնել շուրթերիդ որքան կամենաս: Ուստի թույլ մի՛ տուր, որ որեւէ ժամանակավոր ոգեւորություն քեզ շեղի հավատը կործանելու եւ առաքինությունների կատարումը խափանելու իսկական գործից: Քո հաջորդ նամակում ինձ անթերիորեն եւ լիակատար զեկույցով ներկայացրու նախախնամյալիդ արձագանքը պատերազմին, որպեսզի կարողանանք հասկանալ, թե ինչի հավանականությունն է ավելի մեծ՝ որ դու նրան ծայրահեղ հայրենաստե՞ր դարձնես, թե մոլի խաղաղասեր: Ամեն տեսակ հնարավորություններ էլ կան: Իսկ մինչ այդ ես պետք է զգուշացնեմ քեզ պատերազմից մեծ ակնկալիքներ չունենալ:

Անշուշտ պատերազմը զվարճալի է: Մարդկանց անմիջական վախն ու տառապանքը օրինական եւ հաճույք պատճառող խնջույք է մեր չարչարվող բյուրավոր աշխատավորների համար: Բայց ի՞նչ մշտական բարիք կարող է այն մեզ տալ, եթե միայն, նրանից օգտվելով, հոգիներ չբերենք մեր սանդարամետական Յոր մոտ: Երբ ես տեսնում եմ, որ մարդիկ ժամանակավորապես տառապում են, բայց ի վերջո հեռանում մեզնից, այնպես եմ զգում, ա-

սես ինձ թույլ էր տրվել ճաշակել մի շքեղ խնջույքի միայն առաջին մասից եւ զրկվել եմ մնացածից: Դա ավելի վատ է, քան երբ ընդհանրապես չես մասնակցում խնջույքին: Թշնամին, պատերազմի իր բարբարոսական միջոցներին հավատարիմ, մեզ թույլ է տալիս տեսնել իր ընտրյալների կարճատեւ թշնամությունը միայն նրա համար, որ կտտանքների ու չարչարանքի ենթարկի մեզ՝ ծաղրելով այն անվերջանալի սովը, որն առաջանում է մեծ հակամարտության այս ներկա փուլում նրա կատարած շրջափակման արդյունքում: Յետեւաբար, ավելի լավ է մտածենք, թե ինչպես գործածենք, քան թե վայելենք այս եվրոպական պատերազմը: Որովհետեւ այն ունի որոշակի միտումներ, որոնք ըստինքյան մեր օգտին չեն բնավ: Մենք կարող ենք դաժանության եւ անպարկեշտության մեծ չափաբաժնի հույս ունենալ, բայց, եթե զգոն չլինենք, կտեսնենք, որ իրենց ներդրությունների մեջ հազարավորներ դիմում են Թշնամուն, իսկ հարյուր հազարավորներ, թեեւ այդքան հեռու չեն հասնում, սակայն, այնուամենայնիվ, ուշադրությունը շեղում են սեփական անձից դեպի այնպիսի արժեքներ ու գործեր, որոնք իրենց եսից բարձր են համարում: Ես գիտեմ, որ Թշնամին այս գործերից շատերը չի հավանում:

Շարունակությունը՝ էջ 8

ԷՄԱՆՈՒԵԼ ՎԱՐԱՆՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ էջ 5

Էմանուել Վարանյանի «Արարատի ակնադրությունը» վեպն ուշագրավ է նաեւ նրանով, որ դրանում լավ ներկայացված են գյուղաբնակ հայ երիտասարդության սովորույթները: Ամերիկահայ գրողն իր գրքի դրվագներից մեկում պատմում է, թե ինչպես էին գյուղի աղջիկները գալիս աղբյուրի մոտ՝ կավե կճուճներով ջուր տանելու: Սակայն մինչեւ աղբյուրի մոտ գալը՝ նրանք պճնվում էին՝ իրենց գեղեցկությունը ցուցադրելու համար (տե՛ս Varandyan E., Նույն տեղում, էջ 27):



Նրանք նաեւ սովորություն ունեին շփել իրենց մարմինները սառցե ջրով, մինչեւ որ դրանք կարմրեին եւ առողջ տեսք ստանային: Իսկ երբ ձմեռային սառնորակ օդը խփում էր նրանց դեմքերին ու սրնքամսերին, նրանց մաշկն առողջ սպիտակավարդագույն երանգ էր ստանում (տե՛ս Varandyan E., Նույն տեղում, էջ 27): Անկասկած գյուղաբնակ հայ աղջիկների վերը ներկայացված սովորությունը բնավ էլ ինքնանպատակ չէր: Այստեղ, անկասկած, կար որոշակի միտում. գրավել ջրաղբյուրի մոտ հավաքված համագյու-

ղացի երիտասարդների ուշադրությունը եւ այսպիսով գտնել իրենց կյանքի երկրորդ կեսին: Փաստորեն պարզվում է, որ ավելի քան մեկ դար առաջ ապրած գյուղաբնակ հայուհիներն իրականում այնքան բարդույթավորված ու ներփակված չէին, ինչպես մենք հաճախ կարծում ենք: Գյուղաբնակ հայ համայնքին միավորում էր եւս մեկ ավանդույթ. խոսքը միասին հավաքվելու եւ աշուղական պատմություններ լսելու մասին է: Հարսանեկան տոնակատարության ընթացքում երկու աշուղ մի-

ծում են շրջանցել իրենց ճակատագիրը, նրանց փորձը ծախողվում է: Ինչպես հինդուիստների համար «կարման», այնպես էլ ճակատագիրն արեւելյան ազգերի եւ մասնավորապես հայերի տեսանկյունից անշքելի է: Միակ բանը, ինչ մարդիկ կարող են անել, ճակատագիրը կանխատեսելն ու դրան համակերպվելն է: Այսպես օրինակ՝ Էմանուել Վարանյանի գրքի հերոսուհին՝ Մարինան, զգացմունքային պոռթման պահին հետելու էր Էստուր Սասունին՝ իր ու Արիսի սիրավեպի կապակցությամբ. «Ես սիրելու եմ նրան նույնիսկ գերեզմանում: Դե հիմա գնա՛, կանգնի՛ր տների կտուրների կամ էլ եկեղեցու աշտարակի վրա ու պատմիր ողջ գյուղին իմ ու Արիսի սիրո մասին» (տե՛ս Varandyan E., Նույն տեղում, էջ 313-314):

Էմանուել Վարանյանի երկու պատմություններում էլ ամենակարեւոր ուղերձն արվում է անուղղակիորեն: Հարսանեկան արարողության ընթացքում լարային գործիքի՝ թառի նվագակցությամբ երգվող պոեզիան այնքան գորավոր է, որ նույնիսկ «հնազանդեցնում է բնության ուժերին» եւ բացահայտում սի-

րեցյալի իրական ինքնությունը: Ավելի ուշ, երբ Արիսի ու Մարինայի սիրավեպն ուր որ է պետք է դժբախտացներ ընտանիքին, պայքարի տեսարանը ծավալվում է խմբային երգի ընթացքում: Այս զվարճանքը հասնում է իր գագաթնակետին, երբ Շակիրան՝ Սասունի մորաքույրը, նվագակցում է Արդավազին մի երգի ընթացքում, որը ողբերգություն էր կանխագուշակում. «Օ՛, լեռներ, բա՛րձր լեռներ, թաղե՛ք ինձ ձեր հավերժական ընդերքի մեջ: Օրն ավարտվել է, եւ ես գուցե անորոր կգտնեմ ձեր լանջի անվերջանալի տեսիլքի մեջ» (տե՛ս Varandyan E., Նույն տեղում, էջ 326): Երաժշտությունը եւ պատմություն պատմելը հանդիսանում են մի ուղերձ, որն ուղղված է մարդկային ներմբռնմանը: Արդյունքում հարս ու փեսան հասկանում են, որ իրենց հակամարտող տենչանքներն էլ ավելի են սաստկանում պատմությունը լսելու ընթացքում: Բայց նրանք երբեք չեն ցուցադրում իրենց տարակուսանքները, եւ նման լռակյացությունն անիմաստ է թվում: Ինչեւէ, գլխավոր պատմությունը եւ հարսանեկան հեքիաթը ընդգծում են լռություն պահպանելու պահն իմանալու արքիմանտիկ կարեւորությունը: Սակայն դա մի կանոն է, որը կարող է անսպասելիորեն հակառակ արդյունքների բերել:

Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ Բանասիրական գիտ. թեկնածու

ՄՈՒՐԲ ԳՐՔԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԿՅՎՆՔՈՒՄ

Սկիզբը՝ էջ 6

- Առաքյալն ասում է, որ Աստծու խոսքն ազդու է ավելի հատու է, քան ամեն մի երկաթյա սուր. եւ կտրում անցնում է մինչեւ ոգու եւ հոգու, հողերի եւ ողնաձուծի բաժանման սահմանը. նա քննում է սրտի մտածումներն

տր չէ նաեւ ընթերցածը կյանքում կիրառելու հանգամանքը: Ինչպե՞ս կյանքում իրագործել սուրբգրային պատվիրանները: - Աստվածաշնչի խոսքն ամեն օր պետք է ընթերցել՝ ունենալով որոշակի ապրում, զգալով Սուրբ Հոգու ներկայությունը, Աստծոն



ու խորհուրդները (Եբր. Դ 12): Ինչպիսի՞ դիպուկ համեմատություն:

- Աստծո խոսքը տարբեր ուղղություններով ազդելու կարողություն ունի: Աստված իր մեջ ունի անճառելի բարին, որին հարողորդ ենք լինում՝ ընթերցելով Սուրբ Գիրքը:

Աստվածաշնչի հեղինակներն էլ իրենք նախ ապրեցին այս խոսքով եւ ապա փոխանցեցին մեզ: Հետաքրքիր է նրանց ոճերի տարբերությունը: Ինչպե՞ս կարող ենք համեմատել Պետրոս առաքյալի պարզ նախադասությունները Պողոս առաքյալի բարձր աստվածաբանական ձեւակերպումների հետ, կամ աստվածաբանության մասին Հովհաննես ավետարանչի բարձր դատողությունները Մարկոս ավետարանչի պարզ խոսքի հետ, կամ Երեմիա մարգարեի Նուրբ եւ Եսայի մարգարեի երգեցիկ ոճը եւ այլն: Գրելով աստվածային ներշնչումով՝ նրանցից յուրաքանչյուրը նաեւ իր անձնական դրոշմն է դրել իր «ստեղծագործության» վրա եւ ճշգրտորեն փոխանցել մեզ:

- Տե՛ր հայր, գիտե՞ք, որ ընթերցելուց զատ՝ պակաս կարե-

արքայության զգացողությունը: Դավիթ մարգարեն ասում է. «Տե՛ր, Զո օրենքն իմ ջղերին հանգստություն է»: Ուրեմն Աստծո օրենքը պահելը վկայում է մեր հոգու առողջության մասին: Մենք ամեն օր պետք է ապաշխարողական տրամադրվածություն ունենանք, ինչպես սբ Հովի. Մանդակունին է ասում, չենք կարող մի օր ապաշխարել, հաջորդ օրը՝ զեխանալ: Աստծո պատվիրաններն ամեն օր պետք է պահել: Բայց դրանցից շատերը գուցե չկարողանանք պահել. դրա համար շատ կարեւոր է սբ Հաղորդության միավորությունն Աստծո հետ: Իսկ հաղորդվելիս այսպես աղոթենք. «Տե՛ր Աստված, ես չեմ կարող, բայց հոժար եմ կատարել, Դու օգնիր ինձ, ողորմիր ինձ»:

- Կարո՞ղ ենք ասել, որ Նույն տրամաբանությամբ նաեւ Սուրբ Գրքի ընթերցանությունից առաջ պետք է փոքրիկ աղոթք անենք՝ խնդրելով Աստծուն հասկանալ ընթերցածը:

- Իհարկե՞, քանի որ Աստծո խոսքը բխում է այն խորհրդավոր իրականությունից, որ խոսքով բացատրել հնարավոր չէ: Կարծեմ Պյուրթագորասն է ա-

սում, որ «սկզբնապատճառները ձեւակերպման ենթական չեն», հետեւաբար որքա՞ն անհրաժեշտ է Աստծո օգնությունը՝ այս խորհրդավոր իրականությունը հասկանալու համար, որովհետեւ էական չէ խոսքի տառացի պահպանումը (թե՛ս դա էս կարեւոր է), այլ՝ խոսքի ազդեցությունը հոգու վրա, ինչպես ասում է հայրերից մեկը: Ամեն անգամ Աստվածաշունչը բացելիս կարող ենք այսպես աղոթել. «Օգնեա՛, Հոգի՛ր Սուրբ, Աստված ճշմարիտ»: Եվ Աստված կօգնի մեզ հասկանալ իր խոսքը:

- Հայրերից մեկն ասում է, որ եթե Նույնիսկ մարդը ոչինչ չհասկանա իր ընթերցածից, միեւնույն է, մեծ օգուտ կունենա:

- Այո՛, ինչն էր Դավիթ մարգարեն. նա սաղմունք էր երգում Սավուր թագավորի համար, որպեսզի վերջինս հանգստություն գտնի իր նյարդային լարված վիճակից եւ խաղաղվի: Աստծո խոսքը մեր մեջ անմռունչ ազդեցություն ունի, նրա զորությունից չարը հեռանում է: Սուրբգրային շատ խոսքեր գուցե առաջին ընթերցումից չհասկանանք կամ սխալ հասկանանք: Սբ Գր. Նարեկացին ասում է. «Աստվածաշնչից մի կտր բան իմանալու համար պատրաստ էի իմ ամբողջ իմացածը մոռանալ...», որովհետեւ Աստծո խոսքը բազմաշերտ եւ բազմաբովանդակ է:

- Տե՛ր հայր, կարո՞ղ ենք ասել, որ Աստվածաշունչը վերընթերցանության Գիրք է, այն պետք է միշտ ընթերցել՝ դարձնելով մեր սեղանի Գիրքը:

- Այո՛, ոմանք ասում են, որ ընթերցել են Աստվածաշունչը մի քանի անգամ, բայց Նույնն է, թե ասեն, որ ինչքան անգամ հաց են կերել: Աստծո խոսքը մեզ համար հոգեւոր սնունդ է, առանց որի մեր մեր հոգին չի կարող ապրել, ինչպես որ առանց մարմնավոր կերակրի կմեռնի մեր մարմինը: Տե՛ր Հիսուս Զրիստոսն այս մասին ասում է, որ «Միայն հացով չէ, որ կապրի մարդը, այլ՝ Աստծու ամեն խոսքով» (Ղուկ. Դ 4):

Հյուրընկալեց Ամմեյա ԿԱՌԱՏՅԱԼԸ

ՎՆԻՐՎԿ ՏՆՏԵՍԻ ՎՌՎԿԸ

Սկիզբը՝ էջ 3

Սա նման է նրան, որ ամեն մարդ այս կյանքում օգտվում է Աստծո ստեղծած հարստությունից եւ այլ բարիքներից եւ նախախնամությամբ ոչ թե անկախ տեր է, ով ոչ ոքի պատասխանատու չէ հաշվետվությամբ, այլ նշանակված մի հսկիչ է, որ պարտավոր է հաշիվ տալ Աստծուն, այն Միակին, Ում պատկանում է ամեն ինչ՝ սկզբնապես ու ըստ Եռության: Նշանակված հսկիչը վերջ ի վերջո պետք է թողնի կառավարումը եւ ներկայացնի հաշվետվություն: Այս կերպ էլ ամեն մարդ իր երկրային կյանքի ավարտին պետք է թողնի այն, ինչը

բարեկեցությունից օգնություն ու մխիթարություն է տվել, երախտագիտորեն ու հավատով կաղորթն իր համար եւ կբացն դռներն իրենց հավիտենական տան, որ նրանք վաստակել են հավատարմությամբ ու հերոսաբար համբերելով: Առակն անշուշտ հստակորեն ցույց է տալիս, որ Տերը, կիրառելով միաժամանակ մարդկային եւ հոգեւոր իմաստությունները, դրանք ամենեւին չի խառնում իրար. «Քանի որ այս աշխարհի որդիները ավելի հնարամիտ են քան լույսի որդիներն իրենց սերնդի մեջ» (Ղուկ. ԺԶ 8): Այսինքն՝ ափսոս, որ աշխարհի իմաստության զավակները կործանումի մեջ իսկ ավելի արհեստավարժ են՝ ամենայն միջոցներով կառուցելու իրենց ժամանակավոր բարեկեցությունը, իսկ լույսի զավակները՝ աստվածային իմաստության որդիները, հաճախ չեն կարողանում օգտագործել հարկ եղած ջանքերը, որպեսզի աստվածային լույսի ներքո, դրա ուժի շնորհիվ իրենց ճանապարհը հարթեն եւ ուղղեն հավիտենական ապաստան. «Եվ ես ձեզ ասում եմ՝ անիրավ մամոնայից ձեզ համար բարեկամներ արեք» (Ղուկ. ԺԶ 9):



տնօրինում է երկրի վրա եւ երկնային Դատավորին հաշիվ տա իր արարքների համար:

Առակի հեռացված տևտեսը գիտակցում է, որ մնալու է աղքատ ու անտուն, նման նրան, երբ մարդն արդեն թողնում է այս կյանքը ու տեսնում, որ այն աղքատ է քաջություններով ու բարի գործերով, որոնք կարող էին իրեն տանել երկնային օթեաններից մեկը: Ի՞նչ անի խեղճ տևտեսը: Ի՞նչ անի թշվառ հոգին: Տևտեսը հույս ունի օթեանել այն տներում, որոնց իր տևտեսությունից բաժին է հանել: Կատարելության պակաս ունեցող հոգին հույս ունի, որ կարիքավորներն ու վշտակիրները, որոնց նա իր երկրային

խառնվեց ընդհարապես հարստությանը մամոնա կոչելը: Տերը, իհարկե, ոչ առանց պատճառի, ուղղակի հարստություն ասելու դիմարեն օգտագործեց «մամոնա» բառը, որի մեջ հարստություն հասկացության կողքին դրեց նաեւ կռապաշտություն հասկացությունը: Սրա բացատրության իմաստն այն է, որ Տերը կամեցավ ինչեցնել ոչ թե ուղղակի հարստությունը, այլ այն հարստությունը, որի հավաքման, ձեռք բերման մեջ մոլություն կա, այն հարստությունը, որը դառնում է սրտի կուռքը:

Շարունակելի Թարգմանությունը՝ U. USUՐՈՒՅՅԱԼԻ

ԽԱՌՆԱԿՉԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Սկիզբը՝ էջ 7

Բայց ահա այդտեղ նա շատ անարդար է: Նա հաճախ որպես ավոր վերցնում է այն մարդկանց, ովքեր իրենց կյանքը տվել են այնպիսի նպատակների համար, որոնք նա վատն է համարում շատ հրեշավոր սովետական պատճառով, թե մարդիկ դրանք լավն էին համարում եւ հետապնդում իրենց իմացած ինչպե՞ս: Նաեւ մտածիր, թե որքան անցանկալի մահեր են տեղի ունենում պատերազմի ժամանակ: Մարդիկ, եթե, իհարկե, նրանք մեր Թշնամու կողմից են, սպանվում են այնպիսի վայրերում, ուր նրանք գիտեին, որ կարող են սպանվել, բայց պատրաստ գնում են դրան: Որքան ա-

վելի լավ կլիներ մեզ համար, եթե բոլոր մարդիկ մեռնեին թանկարժեք հիվանդանոցներում՝ շրջապատված ստող բժիշկներով, ստող բուժքույրերով, ստող ընկերներով, ովքեր, ինչպես մենք վարժեցրել ենք նրանց, կյանք են խոստանում մեռնողին, քաջալերում հավատալ, թե հիվանդությունը կյանքի ամեն զանցանք ծածկում է, եւ Նույնիսկ (եթե մեր աշխատավորներն իրենց աշխատանքը լավ են կատարում) մերժում են քահանա բերելու ամեն առաջարկություն, որպեսզի չլինի թե դա հիվանդին մատնի նրա իրական վիճակը: Իսկ որքա՞ն ավերիչ է մեզ համար մահվան շարունակական իշխատակը, որը պատերազմն է ծնում:

Մեր լավագույն զենքերից մեկը՝ գոհ աշխարհայությունը, անզոր է դառնում: Պատերազմի ժամանակ Նույնիսկ մարդը չի կարող հավատալ, որ ինքը հավիտյան ապրելու է: Ես գիտեմ, որ Թեփկածառուկը եւ ուրիշներ տեսել են պատերազմների ժամանակ հավատի վրա գրոհելու մեծ հնարավորություն, բայց ես կարծում եմ՝ այդ տեսակետը չափազանցված է: Թշնամու մարդ հետախույզները բոլորն էլ նրա կողմից հստակորեն հրահանգվել են, որ տառապանքը էական մասն է այն բանի, ինչը նա «փրկություն» է կոչում: Այնպես որ պատերազմով կամ աղետով կործանված հավատը չի կարող իսկապես արժանի լինել կոր-

ծանման ջանքերին: Ես հիմա խոսում եմ երկար ժամանակամիջոցում ձգվող տառապանքի մասին, որը պատերազմն է ծնում: Իհարկե, անմիջապես ահաբեկման, սիրելիների կորստյան կամ մարմնական ցավի պահին դու կարող ես քո այդ մարդուն տիրել, երբ նրա բանականությունը ժամանակավորապես մթաթվել է: Բայց Նույնիսկ այդ ժամանակ, ես տեսել եմ, որ, եթե նա դիմի Թշնամու գլխավոր վարչություն, նրա դիրքը համարյա միշտ կպաշտպանվի:

Ըն սիրառատ քեռի՛ կԱՌՆԱԿԻՉ

Անգլերենից թարգմանությունը՝ U. U.-ի

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com

Ստոր. տպագր.
17.3.2014 թ.

Տպագրանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ